


ՄԱՏՁԵԼԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ



1

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՄԱՏՁԵԼԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ

1

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԵՐ

Մեթոդական ուղեցույց



Երևան – 2023

ՀՏԴ

ԳՄԴ

«Մատչելի կրթական միջավայր. ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ» մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն., Երևան: Էդիթ Պրինտ, 2023 -70 էջ

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից որպես ուսումնական նյութ

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից

Մասնագիտական խմբագիր` մ.գ.թ., դոցենտ Սվաջյան Արաքսիա Հովհաննեսի

Գրախոսներ` մ.գ.թ. դոցենտ Հարությունյան Մարիաննա Ռուբենի
հ.գ.թ. դոցենտ Ալինա Տիգրանի Մանուկյան

Յեղինակներ`



Սվաջյան Արաքսիա Հովհաննեսի
Ադամյան Հայկուհի Արտաշեսի
Գարեգինյան Անի Արմենի
Մարգարյան Լիանա Հովհաննեսի
Հակոբյան Լուսինե Գրավիկի
Մուրադյան Ռուզաննա Մովսեսի
Գրիգորյան Լիլիթ Կարենի

Խմբագիր` Սարգսյան Հայկանուշ Անատոլի

Համակարգչային ձևավորում` Խուղավերոյան Դավիթ Գեղամի
Դավթյան Յեղինե Լյովայի

ՄԱՏՉԵԼԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ձեռնարկների շարք



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ	6
ՄԱՍ 1. Հաստատության մուտք և հարակից տարածք	8
Ցուցիչներ և չափանիշներ	8
Հաստատության մուտք.....	9
Անցուղիներ և թեքահարթակներ.....	10
ՄԱՍ 2. Հաստատության տարածք	12
Ցուցիչներ և չափանիշներ	12
Միջանցքներ.....	13
Կառուցվածք.....	13
Գունային լուծումներ	14
Կահավորում.....	14
Դռներ.....	14
Աստիճաններ.....	17
Ճաղաչար և բազրիք	19
Հարթակ-վերելակ	19
Վերելակ	20
ՄԱՍ 3. Ցուցանակներ և նշաններ	24
Ցուցիչներ և չափանիշներ	24
Տեղադրման չափանիշները.....	27
Մատչելի լինելը	27
Գունային և լուսային պահանջները.....	28
ՄԱՍ 4. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ	30
Գուլքի դասավորվածություն	31
Նստարաններ	32
Գրատախտակ	33
Պահարաններ.....	34
Պատուհաններ.....	34
Լուսավորություն	35
Վարդակներ.....	36
ՄԱՍ 5. Չուղարաններ	38
Սանհանգույցի տարածքը	39
Լուսավորություն և ցուցանակներ	41
Լվացարաններ և մաքուր ջուր.....	42
Լվացարաններ.....	42

Ծորակներ	42
Այլ պարագաներ	43
Խցիկներ և զուգարանակոնքեր	43
ՄԱՍ 6. Ռեսուրս-սենյակ	46
Ռեսուրս-սենյակի կառուցվածքը	47
Լուսավորումը	47
Գունային լուծումները	48
Կահավորումը	48
Սեղան	49
ՄԱՍ 7. Ապաստարան	54
Գտնվելու վայրը	55
ճգնաժամային աջակցության համակարգեր	57
Ապաստարանի չափանիշները	57
Մատչելիություն	57
Տարածքի չափեր	58
Լուսավորում	59
Օդափոխություն	59
Անհրաժեշտ սարքեր և պարագաներ	59
Հավելված 1	62
Գրականության ցանկ	69

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

- Ցանկանում եք, որ Ձեր դպրոցը կարողանա ավելի լավ արձագանքել Ձեր սովորողների կրթական անհատական կարիքներին և ավելի կառուցողական մոտեցում դրսևորել բազմազանությանը և տարասեռությանը:
- Ինքներդ Ձեզ հարցնում եք՝ ինչպե՞ս կարող է Ձեր դպրոցն ապահովել մատչելի և հասանելի կրթություն բոլորի համար:

Եթե այո, ապա այս ուղեցույցը Ձեզ և Ձեր դպրոցի համար է:

Սույն ուղեցույցը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր աշխատում են դպրոցներում և ովքեր մոտիվացված են իրենց դպրոցներն ավելի ներառական դարձնելու համար: Այս գործառույթն առաջին հերթին վերապահված է տնօրեններին, սակայն ուղեցույցն օգտակար կլինի նաև ուսուցիչների, դպրոցի վարչական անձնակազմի կամ դպրոցում աշխատող այլ մասնագետների համար:

Ուղեցույցում Դուք կգտնեք անհրաժեշտ տեղեկատվություն դպրոցի ֆիզիկական ենթակառուցվածքների, գույքի, կահավորման, սարքավորումների մատչելիության և խելամիտ հարմարեցումների վերաբերյալ, և առհասարակ, ամեն ինչ այն մասին, թե ինչպես կարելի է սկսել, իրականացնել և գնահատել դպրոցի զարգացման գործընթացը դեպի ներառականություն: Այն կօգնի և կնպաստի ներառման ինդեքսի իրագործմանը՝ դպրոցների ֆիզիկական միջավայրը համապատասխանեցնելով ներառական կրթության ապահովման պահանջներին: Ընդհանրապես, պայմանների ապահովումը շատ կարևոր է: Աշխատանքի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է անհրաժեշտ պայմանների առկայությամբ: Ներառական կրթությունը կարող է դրական ազդեցություն ունենալ այն դեպքում, եթե ստեղծվեն դրա իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:

Այս ուղեցույցը «Մատչելի կրթական միջավայր» ձեռնարկների շարքի առաջին մասն է: Յուրաքանչյուր դպրոց առերեսվում է իր առջև ծառայած կոնկրետ մարտահրավերների և մշակում է դպրոցի ֆիզիկական մատչելիության իր անհատական պլանը: Այս ուղեցույցն ամփոփում է տարբեր դպրոցների և մասնագետների փորձը, որպեսզի այն հարմարեցնելու հնարավորություն ունենա մեր երկրի ցանկացած դպրոց:

Ինչպես օգտվել ուղեցույցից

Այս ուղեցույցում դուք կգտնեք հարցարաններ, որոնք ամփոփում են յուրաքանչյուր բաժնի հիմնական կետերը: Խորհուրդ է տրվում այն մեկ անգամ ևս կարդալ: Հիմնաբառերը (բանալի բառեր) ամբողջ տեքստում ընդգծված են թավով, իսկ գծապատկերներն ու նկարները կօգնեն պատկերացում կազմել կարևոր ցուցիչների և չափանիշների մասին: Ուղեցույցի վերջում Դուք կգտնեք ուսումնական հաստատության ֆիզիկական մատչելիության գնահատման ստուգաթերթը, որով կարող եք ցանկացած պահի գնահատել Ձեր դպրոցի համապատասխանությունը ներառականության պահանջներին:

Դե ինչ, բարի ընթերցում :)



ՄԱՍ 1. Հաստատության մուտք և հարակից տարածք



ՄԱՍ 2. Հաստատության տարածք



ՄԱՍ 3. Ցուցանակներ և նշաններ



ՄԱՍ 4. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ



ՄԱՍ 5. Հուզարաններ



ՄԱՍ 6. Ռեսուրս սենյակ



ՄԱՍ 7. Ապաստարան

ՄԱՍ 1.

Հաստատության մուտք և հարակից տարածք

Ցուցիչներ և չափանիշներ

- ◆ Հաստատության տարածք մուտք գործելու հիմնական դարպասի շրջակայքը հարթ է, գերծ ափելորդ ակոսներից և խոչընդոտներից:
- ◆ Դեպի դարպաս տանող ճանապարհը բավականաչափ լայն է անվասայլակ, քայլակ կամ օժանդակ այլ սարքավորումներ օգտագործող երեխաների համար:
- ◆ Դեպի շենք տանող մայթերին առկա են բարձր եզրաքարեր՝ անվասայլակ, քայլակ կամ օժանդակ այլ սարքավորումներ օգտագործելիս մայթի սահմաններից շեղվելուց խուսափելու համար:
- ◆ Հիմնական մուտքը գերծ է աստիճաններից և հասանելի բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողների համար:
- ◆ Այլընտրանքային մուտքերը գերծ են աստիճաններից և հասանելի է բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողների համար:
- ◆ Հաստատության մուտքի մոտ և հարակից տարածքում, ինչպես նաև առկա անցուղիների հատակի մակերեսն ամուր է, հարթ, գերծ քարերից, ավազից կամ ցեխից:
- ◆ Բակում առկա անցուղիներն ունեն առնվազն 92սմ լայնություն:
- ◆ Անցուղիների հատվածում գլխավերևում գտնվող հնարավոր վտանգները, ինչպես օրինակ՝ լուսավորությունը, ցուցանակները, ծառերի ճյուղերն ու սաղարթները և այլն, գտնվում են 203սմ բարձրության վրա:
- ◆ Առկա են թեքահարթակներ բոլոր այն դեպքերում, երբ փոխվում է հատակի բարձրությունը:
- ◆ Թեքահարթակների մուտքի հատվածները գերծ են անհարկի պատնեշներից և խոչընդոտներից (ճաղաշարեր, կայանված մեքենաներ, ծաղկամաններ և այլն):
- ◆ Թեքահարթակների թեքությունը բավարար է, որպեսզի անվասայլակ, քայլակ կամ օժանդակ այլ սարքավորումներ օգտագործող սովորողները կարողանան ինքնուրույն օգտվել դրանից:
- ◆ Թեքահարթակների մակերեսն ամուր է, հարթ և լավ պահպանված:
- ◆ Թեքահարթակներն ունեն անհրաժեշտ ճաղաշար կամ արգելապատ համապատասխան բազրիքներ և/կամ բռնածողեր:

Հաստատության մուտք

Ուսումնական հաստատության մասին առաջին տպավորությունը ծնողների, երեխաների և այլ այցելուների մոտ ձևավորվում է հենց մուտքից և հարակից տարածքից: Այդ իսկ պատճառով ուսումնական հաստատության հասանելիության և մատչելիության մասին խոսելիս պետք է նկատի ունենալ անվտանգության, հարմարավետության և նպատակահարմարության ներդաշնակությունը:

Յուրաքանչյուր հաստատության մուտք սովորաբար հստակ տարբերվում է շենքի մնացած մասերից ճարտարապետական ընդգծված առանձնահատկություններով: Ուսումնական հաստատության մուտքը պետք է լինի հյուրընկալ, արտացոլի դպրոցի «քննավորությունը» և ողջունի բոլորին: Մուտքի տարածքն իր դասավորությամբ պետք է օգնի սովորողներին հանգիստ ներս մտնել: Դեպի մուտքը տանող մայթի, արահետների կամ նախասրահի մակերևույթի կառուցվածքի փոփոխությունը կարող է հուշել մուտքի գտնվելու վայրը, ինչը հատկապես կիրառելի է տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար: Կարելի է օգտագործել նաև զգայական այնպիսի ազդանշաններ, ինչպիսիք են ձայնային ազդանշանները փոքրիկ շատրվանների կամ հոտառական ազդանշանները՝ բուրավետ բույսերի տեսքով:

Հաստատության բոլոր մուտքերը, անկախ նրանից՝ հիմնական մուտքն է, թե ոչ, պետք է նախագծել համընդհանուր դիզայնի սկզբունքներին համապատասխան: Այն դեպքերում, երբ հաստատության շենքերի ճարտարապետական լուծումներն ի սկզբանե հիմնված չեն եղել համընդհանուր դիզայնի սկզբունքների վրա, անհրաժեշտ է հաստատության տարածքի բարելավման կամ փոփոխությունների ծրագրերում և նախագծերում նախատեսել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին փոփոխություններ: Արտաքին փոփոխությունները կարող են ներառել, օրինակ՝ աստիճանների, թեքահարթակների կամ հարթակ-վերելակների տեղադրումը: Այնուամենայնիվ, եթե ընդհանուր մուտքը շարունակում է անհասանելի մնալ, կարելի է օգտվել հասանելի վայրում գտնվող այլընտրանքային տարբերակից: Նման դեպքերում ցանկացած այլընտրանքային մուտք պետք է լինի նույնքան ազատ և հստակ փակցված ցուցանակներով, որքան հիմնական մուտքը, և պետք է հասանելի լինի բոլորի համար:


Բոլոր մուտքի դռներից դուրս պետք է լինի բավարար տարածք, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձը կարողանա մանևրել, հասկանալ մուտք գործելու համակարգերը: Հաստատությունից դուրս գալուց հետո շատ հաճախ մարդիկ կանգ են առնում մուտքի մոտ՝ վերարկուի կոճակները կոճկելու կամ հովանոցը բացելու համար, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ունենալ բավարար տարածք՝ մարդկանց ազատ տեղաշարժը չխոչընդոտելու համար: Ըստ ՀՀԾՆ IV-11.07.01-2006 նորմատիվ իրավական ակտի նախամուտքերի և նախամուտք-անցախուղների խորությունը պետք է լինի ոչ պակաս քան 180սմ: Որոշ միջազգային չափանիշներում էլ մուտքից դուրս նրան հարող ազատ տարածքը վայրէջքի կամ անվասայլակով շրջադարձի համար սահմանված է 240սմx240սմ (World Disability Foundation):

Հաստատության մուտքի դռները պետք է լինեն ավելի խորը բացվող՝ բախման վտանգից խուսափելու համար: Եթե մուտքի դռները բացվում են դեպի դուրս, ապա պետք է տեղադրված լինեն այնպես, որ դրանց բացվելուց որևէ մեկը չսայթաքի կամ չընկնի: Մի քանի դռների օգտագործումը հնարավորություն կտա մարդկանց՝ ընտրել ամենահարմար տարբերակը ներս մտնելու համար: Յուրաքանչյուր մուտքի հասանելի շեմը պետք է հավասար լինի հատակի բարձրությանը: Այնուամենայնիվ, եթե բարձրացված շեմն անխուսափելի է հաստատության կառուցվածքային կամ այլ պատճառներով, ապա այն պետք է 10սմ-ից բարձր չլինի, իսկ 5սմ-ը գերազանցող ցանկացած ելուստ պետք է լինի թեք կամ կլորացված:

Անցուղիներ և թեքահարթակներ

Ուսումնական հաստատության բակից մինչև գլխավոր կամ այլընտրանքային մուտքեր տանող անցուղիները և արահետները պետք է զերծ լինեն խոչընդոտներից: Նման դեպքերում պետք է հաշվի առնել ոչ միայն գետնին առկա արգելքները, այլև գլխավերևում գտնվող հնարավոր վտանգները, ինչպես օրինակ՝ լուսավորությունը, ցուցանակները, ծառերի ճյուղերն ու սաղարթները և այլն (սկար 1): Նման դեպքերում պետք է պահպանել 203սմ-ից ոչ պակաս բարձրություն գետնի մակերեսից: Ծենքի մուտքը պետք է պատրաստված լինի չսայթաքող կոշտ նյութից և լավ լուսավորված (World Disability Foundation):

Եթե հաստատության հասանելի մուտքը գլխավոր մուտքը չէ, ապա դեպի հասանելի այլընտրանքային մուտք տանող ճանապարհը ողջ երկայնքով պետք է գծանշել՝ որպես առանց արգելքների ուղի, և տեղադրել ուղղորդող ցուցանակներ: Հաստատության մուտքերի դիմաց պետք է նախատեսել բավարար տարածք՝ անվասայլակով, քայլակով կամ օժանդակ այլ սարքավորումներով տեղաշարժվելու դեպքում մանկրելու հնարավորություն ապահովելու համար:



Սկար 1. Հաստատության մուտք, անցուղիներ և թեքահարթակներ

Ուսումնական հաստատությունների շենքերը, բացի հիմնական մուտքից, պետք է ունենան առնվազն մեկ այլընտրանքային մուտք, և բոլորն էլ պետք է ապահովեն հասանելիություն: Ուղիները, որոնք տանում են դեպի շենքի մուտքերը, պետք է ունենան առնվազն 92սմ լայնություն, իսկ առկա թեքահարթակի թեքությունը չպետք է գերազանցի 8%-ը (5°): Թեքահարթակի մակերեսը պետք է լինի կոշտ և չսայթաքող: Դրանք պետք է նախագծված լինեն այնպես, որ կանխվի ջրի և/կամ ձյան կուտակումը: Բոլոր այն դեպքերում, երբ թեքահարթակի ամենաբարձր կետը գերազանցում է 15սմ-ը, թեքահարթակների երկու կողմերում անհրաժեշտ է տեղադրել ճաղաշարեր կամ արգելապատ: Այն դեպքերում, երբ թեքահարթակը մի կողմով հարում է շենքի պատին, այդ կողմում ճաղաշարի փոխարեն պետք է տեղադրված լինեն բռնածողեր: Գաղափարի բարձրությունը թեքահարթակի մակերեսից պետք է լինի 70-90սմ: Լիարժեք անվտանգություն ապահովելու համար թեքահարթակների կողքին պետք է ունենալ առնվազն 5սմ բարձրությամբ կողային պատնեշներ (World Disability Foundation):



ՄԱՍ 1. Հաստատության մուտք և հարակից տարածք



ՄԱՍ 2. Հաստատության տարածք



ՄԱՍ 3. Ցուցանակներ և նշաններ



ՄԱՍ 4. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ



ՄԱՍ 5. Հուզարաններ



ՄԱՍ 6. Ռեսուրս սենյակ



ՄԱՍ 7. Ապաստարան

ՄԱՍ 2.

Հաստատության տարածք

Ցուցիչներ և չափանիշներ

- ◆ Հաստատության ներսում հատակի մակերեսն ամուր է, հարթ և լավ պահպանված:
- ◆ Առկա են թեքահարթակներ բոլոր այն դեպքերում, երբ փոխվում է հատակի բարձրությունը:
- ◆ Շեմերը չեն գերազանցում 10մմ-ը, իսկ 5մմ-ը գերազանցող ցանկացած ելուստ թեք է կամ կլորացված:
- ◆ Միջանցքներն ու անցումներն ունեն 150-180սմ լայնություն:
- ◆ Աստիճաններն ունեն ճաղաշար և բազրիքներ:
- ◆ Բազրիքներն ունեն բարձր գունային հակադրություն:
- ◆ Սանդուղքի յուրաքանչյուր աստիճանի առջևի եզրը ներկված է (պահպանված է գունային հակադրությունը):
- ◆ Միջանցքները, անցումները և աստիճանները լավ լուսավորված են:
- ◆ Հարկից հարկ տեղափոխվելու համար առկա է վերելակ և/կամ հասանելիություն ապահովող այլ սարքավորումներ և հարմարանքներ:
- ◆ Հաստատության ներսում առկա բոլոր դռներն ունեն առնվազն 90սմ լայնություն:
- ◆ Դռների բռնակները տեղադրված են հատակից 90-110սմ բարձրության վրա:

Միջանցքներ

Ուսումնական հաստատությունները սովորաբար ունենում են մեծ թվով նմանատիպ դասասենյակներ, որոնք գտնվում են միջանցքներում: Դրանք իրենց հերթին այնքան էլ հարմար չեն հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար: Միջանցքներում տեղաշարժվելը պետք է լինի անխոչընդոտ բոլոր սովորողների համար, քանի որ սովորողները միջանցքի անցումներով ոչ միայն դասասենյակից դասասենյակ են տեղափոխվում, այլև դասամիջոցների հիմնական մասն անցկացնում են այնտեղ: Գոյություն ունեն հստակ սահմանված չափանիշներ, որոնց պետք է համապատասխանեն ուսումնական հաստատության միջանցքները:

Կառուցվածք

Միջանցքների դասավորությունը և դիզայնը պետք է օգնեն հեշտությամբ կողմնորոշվել, ճանապարհ գտնել և շարժվել շենքի ներսում: Պետք է խուսափել երկար միջանցքներից: Միջանցքների կառուցվածքը պետք է լինի պարզ հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, ինչպես նաև՝ առաջին անգամ դպրոց այցելողների համար: Իդեալական միջանցքներում աստիճաններ և թեքահարթակներ չկան, իսկ հատակը հարթ է: Իհարկե, հիմնականում հնարավոր չէ միջանցքներն ամբողջովին կառուցել նշված սկզբունքով: Այս դեպքում դպրոցները պետք է ապահովեն աստիճանների, թեքահարթակների, վերելակների և դրանց արդյունավետ կիրառելիության համարժեք համակցություն, որպեսզի բոլորը կարողանան հեշտությամբ շրջել դպրոցում՝ առանց ավելորդ ժամանակ վատնելու:

Տարրական դասարաններում աշակերտներն իրենց դպրոցական օրվա ժամանակի մեծ մասն անցկացնում են մեկ դասարանում: Այնուամենայնիվ, միջնակարգ դպրոցներում աշակերտները ստիպված են տեղաշարժվել ընդհանուր և մասնագիտացված տարբեր դասասենյակների միջև, ուստի անհրաժեշտ է ուշադիր դիտարկել տեղաշարժի հեշտությունն ու հարմարավետությունը և նվազագույնի հասցնել անցուղիների հեռավորությունները: Միջանցքներն ու անցումները պետք է լինեն բավականաչափ լայն և հարմար անվասայլակ, քայլակ կամ օժանդակ այլ սարքավորումներ օգտագործող սովորողների համար: Միջանցքները պետք է ունենան 150-180սմ լայնություն և լուսավորված լինեն ամբողջ տարածքում (UNICEF, 2014): Անցումներն ու աստիճանները ևս պետք է լավ լուսավորված լինեն: Անհրաժեշտ են թեքահարթակներ բոլոր այն դեպքերում, երբ կտրուկ փոխվում է հատակի բարձրությունը:

Հաստատության ներսում պետք է հնարավորինս բացառել շեմերի ամկայությունը: Եթե բարձրացված շեմն անխուսափելի է կառուցվածքային կամ այլ պատճառներով, ապա այն չպետք է գերազանցի 10սմ-ը, իսկ 5սմ-ը գերազանցող ցանկացած ելուստ պետք է լինի թեք կամ կլորացված: Անվասայլակով տեղաշարժվող կամ շարժունակության դժվարություններ ունեցող սովորողների՝ հարկից հարկ հեշտությամբ տեղափոխվելն ապահովելու համար պետք է ունենալ թեքահարթակներ, հարթակ-վերելակներ, իսկ հնարավորության դեպքում՝ վերելակ:

Միջանցքների պատերին խորհուրդ է տրվում ունենալ գունավոր վահանակներ, որոնց վրա կարող են լինել ցուցանակներ և արտացոլող էկրաններ՝ տարածքում ազատ կողմնորոշվելու համար: Միջանցքներում ամկա ապակեպատ դռների և էկրանների ապակու վրա պետք է լինեն գծանշումներ (McKevitt, 2012):

Գուևային լուծումներ

Պետք է ուշադրություն դարձնել դպրոցական միջավայրի գուևային լուծմանը: Գուևների կիրառությունը կարևոր է ճանապարհն ընդգծելու և սովորողներին կողմնորոշելու համար: Համապատասխան գուևի օգտագործումը կարող է օգնել ընդգծել դպրոցի ճարտարապետական առանձնահատկությունները կամ ցույց տալ փոփոխությունները: Այն կարող է օգտագործվել նաև տեսողության խանգարում ունեցող սովորողներին օգնելու նպատակով՝ հակադրություն ստեղծելով, օրինակ՝ հատակի և պատերի, պատերի և բազրիքների ֆոնների միջև: Երանգային հակադրությունը կարևոր է մի շարք առումներով. պատերին հակադրվող հատակներն ընդգծում են սենյակի չափը, բազրիքները՝ ցույց տալիս իրենց գտնվելու վայրը, իսկ ընդհանուր շրջապատին գուևնով հակադրվող դռները ցույց են տալիս իրենց դիրքը և օգնում ճանապարհ գտնել:


Գուևային համադրությունն ընտրելիս պետք է խուսափել բարդ լուծումներից և հակադիր գուևների օգտագործումից (օրինակ՝ կարմիր-կանաչ), ինչը կարող է դժվարություններ ստեղծել տեսողության խնդիրներ ունեցող սովորողների համար: Հետազոտությունները ցույց են տվել, որ աուտիստիկ սպեկտրի խանգարումներ ունեցող շատ սովորողներ գուևներն ավելի մեծ ինտենսիվությամբ են տեսնում, քան մյուսները. հետևաբար, խորհուրդ է տրվում խուսափել վառ հիմնական գուևների օգտագործումից՝ նախապատվությունը տալով ավելի մեղմ երանգների (Ahrentzen & Steele, 2009):

Կահավորում


Միջանցքում տեղադրված իրերը կարող են պոտենցիալ վտանգ ներկայացնել: Օրինակ՝ չօգտագործվող կահույքը, բույսերը, պահարանները կարող են խոչընդոտել հատկապես շարժունակության միջոցներից օգտվողների տեղաշարժը: Պատուհանները, որոնք բացվում են դեպի միջանցք, վտանգ են ներկայացնում տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար, քանի որ դրանք չեն հայտնաբերվում սպիտակ ձեռնափայտերով: Այդ իսկ պատճառով հարկ է խուսափել միջանցքներում դրանց առկայությունից: Պահարանները, կահույքը, այլ դեկորատիվ ամրացումները պատից 100մմ-ից ավելի դուրս չպետք է լինեն (McKevitt, 2012):

Դռներ

Հիմնական մուտքը կարող է ունենալ մեկ կամ երկու բացվող դուռ: Երկու դռների առկայության դեպքում մուտքը պետք է ունենա ոչ պակաս, քան 150սմ լայնություն, իսկ մեկ դռան դեպքում՝ ոչ պակաս, քան 90սմ (նկար 2): Եթե դռներն ունեն շեմ, ապա դրանք պետք է 10մմ-ից բարձր չլինեն, իսկ 5մմ-ը գերազանցող ցանկացած ելուստ պետք է լինի թեք կամ կլորացված: Յուրաքանչյուր մուտք պետք է ապահովի բավարար տարածք անվասայլակով մանևրելու համար: Եթե մուտք գործելու համար պահանջվում է 180° շրջադարձ կատարել, ապա մանևրելու համար պետք է ապահովել ոչ պակաս, քան 150x200սմ տարածք (նկար 3):




Նկար 2. Հիմնական մուտքի դռների չափերը մեկ կամ երկու դռան առկայության դեպքում



Նկար 3. Անվանսայլակով 180° շրջադարձ կատարելու համար անհրաժեշտ տարածք


Դռները, որոնք էլեկտրական չեն, չպետք է պահանջեն մեծ ուժ դրանք բացելու համար: Ավտոմատ բացվող դռները պետք է փակվեն 20 վայրկյան ուշացումով, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդիկ և տարեցներն անհրաժեշտ ժամանակ ունենան հաստատություն մտնելիս կամ դուրս գալիս: Պտտվող դռներից պետք է խուսափել, եթե դրանք բավականաչափ մեծ չեն սայլակ տեղավորելու համար, և եթե կա դրա պտտման արագությունը դանդաղեցնելու միջոց (World Disability Foundation):

Դուռը և դռան շրջանակը պետք է ունենան գունային հակադրություն, յուրաքանչյուր սենյակի դուռ պետք է նույնականացվի տառերով կամ համարակալմամբ, որպեսզի տեսողության խնդիրներ ունեցող սովորողները կարողանան հեշտությամբ կողմնորոշվել: Հաստատության ներսում դռների լայնությունը պետք է լինի նվազագույնը 90սմ: Դռների բռնակները և կողպեքները պետք է հեշտ օգտագործվեն՝ չպահանջելով չափից ավելի ուժի գործադրում: Դռների բռնակների կիրառման համար առավել հարմարավետ են D-աձև տարբերակները (նկար 4) (World Disability Foundation):




Նկար 4. Դռների բռնակների չափանիշներ

Դռան բռնակի բարձրությունը պետք է լինի 90-110սմ՝ բռնակի միջին գծից մինչև պատրաստի հատակը: Մատչելի դռների փեղկերում հարկավոր է նախատեսել թափանցիկ և հարվածադիմացկուն նյութով լցված դիտարկային պանելներ, որոնց ստորին մասը պետք է գտնվի հատակի մակարդակից 30-90սմ սահմաններում: Դռների ստորին հատվածում ցանկալի է ունենալ պաշտպանիչ հակահարվածային շերտ՝ անվասայլակի անիվների կամ ոտնակների հարվածներից դուռը չվնասելու համար: Այդ շերտի նվազագույն բարձրությունը պետք է լինի 30սմ հատակի մակարդակից (նկար 5) (ՀՀՇՆ IV-11.07.01-2006):



Նկար 5. Հաստատության ներսում դռների, դրանց բռնակների, դիտարկային պանելների և հակահարվածային շերտերի չափանիշներ

Ավտոմատ բացվող դռները կարող են աշխատել գետնին տեղադրված սենսորների, շարժման սենսորների կամ ձեռքով սեղմվող կոճակների միջոցով: Սենսորները պետք է լինեն բավականաչափ զգայուն, որպեսզի արագ և ճիշտ ժամանակին ակտիվանան: Եթե դռները էլեկտրական են և բացվում են կոճակի սեղմամբ, ապա դրանք պետք է տեղադրվեն դռան սողնակային մասում՝ 60-100սմ հեռավորության վրա (Նկար 6) (World Disability Foundation):




Նկար 6. Էլեկտրական դռների բացման կոճակների տեղադրման չափանիշներ

Աստիճաններ

Յուրաքանչյուր սովորող, աշխատակից և նույնիսկ այցելու պետք է իրեն ապահով և հարմարավետ զգա դպրոցում՝ առանց հատուկ աջակցության:

Աստիճանները հատակի տարբեր մակարդակների միջև անցում ապահովելու ամենատարածված միջոցն են, և կարևոր է, որ դրանք նախագծված ու կառուցված լինեն այնպես, որ ապահովեն բոլորի անվտանգությունը նույնիսկ արտակարգ իրավիճակների դեպքում: Դրանք պետք է լինեն հստակ տեսանելի և հեշտ ճանաչելի: Աստիճանը սանդուղքի հիմնական տարրն է մեկ քայլ բարձրանալու կամ իջնելու համար: Աստիճանով սահմանվում է քայլի բարձրությունը և սանդուղքի կառուցվածքը: Աստիճանների տեղադրման չափանիշները սահմանվում են շինարարական նորմերի և հատուկ կանոնակարգերի միջոցով: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի N263-Ն հրամանի՝ ճիշտ նախագծված և տեղադրված աստիճանի խորությունը պետք է լինի 13սմ (թույլատրելի է 25-35սմ), իսկ բարձրությունը՝ 15սմ (թույլատրելի է 13-17սմ): Աստիճանները պետք է լինեն հարթ, առանց ելուստների ու անողորկ հորիզոնական մակերևույթով: Աստիճանի երիզը պետք է լինի կորածն, կորության շառավիղը՝ 5սմ-ից ոչ ավելի: Աստիճանների քանակը մեկ սանդղաբազուկում (բացառությամբ ոլորածն սանդուղքների) պետք է լինի 3-ից ոչ պակաս և 16-ից ոչ ավելի: Սանդուղքը պետք է լինի ապահով և լավ լուսավորված:

Աստիճաններին պետք է նախորդի շոշափելի խորդուբորդություն և գունային հակադրություն ունեցող 60սմ լայնությամբ շերտ (Նկար 7), ինչը տեսողության խնդիրներ ունեցող անձանց կհուշի աստիճանների սկիզբը և ավարտը (World Disability Foundation):



Նկար 7. Աստիճանների սկիզբը և ավարտը նշող զգայական հատվածի չափանիշներ

Ցանկալի չէ ուսումնական հաստատությունում ունենալ պարուրած սանդուղքներ և կոնաձև քայլքով աստիճաններ, քանի որ սայթաքումների հավանականությունն այս դեպքում ավելի մեծ է:

Աստիճանների բռնակները և ճաղաշարերը պետք է սկսվեն և շարունակվեն առաջին և վերջին աստիճաններից առնվազն 45սմ հեռավորության վրա: Աստիճանների սկիզբը պետք է ունենա 120սմ երկարությամբ շոշափելի ծածկով մակերես (World Disability Foundation): Յուրաքանչյուր աստիճան պետք է ունենա գունային բարձր հակադրությամբ 30սմ-անոց չսայթաքող եզրաշերտ (նկար 8)՝ կանխելու համար տեսողության խանգարումներ ունեցող անձանց սայթաքելու հավանականությունը (World Disability Foundation):

Վթարային սանդուղքները ևս պետք է համապատասխանեն վերը նշված չափանիշներին:




Նկար 8. Աստիճանների ընդգծման տարրերակ

Ճաղաշար և բազրիք

Սանդուղքների և թեքահարթակների կողքից կառուցված ճաղաշարերը կամ արգելապատերը ստեղծում են անվտանգ տարածք՝ նվազագույնի հասցնելով բարձրությունից ընկնելու հավանականությունը: Բազրիքը սանդուղքների, պատշգամբների, կամուրջների ճաղաշարերի վրա ձգվող հորիզոնական շինվածք է, որը տեղադրվում է աստիճանների երկու կողմերին՝ ձգվելով առաջին աստիճանից մինչև վերջինը: Գաղափարների, արգելապատերի և բազրիքների բարձրությունն աստիճանների մակերևույթից պետք է լինի 70-90սմ-ի սահմաններում: Բազրիքների բռնածողերը սանդուղքի ներքին կողմից պետք է լինեն չընդհատվող ամբողջ բարձրությամբ: Բռնածողերի ավարտվող մասերը պետք է լինեն սանդղաբազուկից կամ թեքահարթակի թեք մասից 30սմ երկար: Այն դեպքում, երբ սանդուղքի լայնությունը 250սմ-ից մեծ է, ապա հարկավոր է նախատեսել լրացուցիչ բաժանիչ բռնածողեր: Սա կապահովի անվտանգությունը, հատկապես, այն դեպքերում, երբ աստիճաններից օգտվում են մեծ թվով մարդիկ (ՀՀԸՆ IV-11.07.01-2006):

Հարթակ-վերելակ

Հաճախ ուսումնական հաստատությունների շենքային պայմանները թույլ չեն տալիս հարկից հարկ անցումն ապահովող աստիճաններին զուգահեռ կառուցել թեքահարթակներ, որոնք կհամապատասխանեն սահմանված չափանիշներին և հնարավորություն կտան անվասայլակ, քայլակ կամ օժանդակ այլ սարքավորումներ օգտագործող սովորողներին ինքնուրույն և հեշտությամբ օգտվել դրանցից: Նման դեպքերում, որպես այլընտրանք, կարելի է նախագծել և կառուցել հարթակ-վերելակներ (նկար 9): Հարթակ-վերելակներ պետք է լինեն յուրաքանչյուր սանդղաբազուկում: Եթե հարթակ-վերելակները տեղադրված են հաստատության ոչ բոլոր աստիճանների մոտ, պետք է լինեն ցուցանակներ, որոնք հնարավորություն կտան արագ կողմնորոշվել և ազատ տեղաշարժվել հաստատության հարկերով:



Նկար 9. Հարթակ վերելակը՝ տեղադրված աստիճանների կողքին

Վերելակ

Վերելակը, ընդհանուր առմամբ, շենքի մեջ հարկերով տեղաշարժման ապահովող ամենահարմար մեթոդն է այն մարդկանց համար, ովքեր չեն կարող կամ չեն նախընտրում օգտվել աստիճաններից: Վերելակները պետք է ունենան համընդհանուր ձևավորում, լինեն ավելի արագ և միաժամանակ տեղափոխեն ավելի շատ մարդկանց, քան հարթակ-վերելակները: Վերելակները կարող են նախագծվել ըստ «տարիանման վերելակների» չափանիշների: Սա նշանակում է, որ վերելակը կարող է օգտագործվել հրդեհի, երկրաշարժերի կամ այլ արտակարգ իրավիճակների դեպքում՝ շենքից մարդկանց տարահանումն առավել արագ և անխոչընդոտ իրականացնելու համար: Հաստատության ներսում՝ մուտքի, հարկից հարկ անցումների կամ առանցքային այլ տարածքների մոտ պետք է տեղադրված լինեն դեպի վերելակ ուղղորդող նշաններ: Նշանները կամ ցուցանակները պետք է ներառեն հասանելի մուտքի միջազգային նշանը (նկար 10):


Եթե վերելակները չեն համապատասխանում համընդհանուր ձևավորման չափանիշներին, ապա պետք է ապահովել այլընտրանքային մեխանիզմներ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար:



Նկար 10. Հասանելի մուտքի միջազգային նշան

Վերելակը պետք է ունենա 180x180սմ ներքին չափեր: Սա հնարավորություն կտա անվասայլակով օգտվողներին և մանկասայլակ ունեցող ծնողներին շրջվել վերելակի ներսում, ինչպես նաև մանկրելու տեղ տրամադրել շարժունակության խնդիրներ ունեցող անձանց համար: Խցիկի՝ 2030մմ լայնությամբ և 1525մմ խորությամբ ներքին չափերով վերելակները կարող են կիրառվել այնտեղ, որտեղ տարածքն ավելի սահմանափակ է: Այս դեպքում ևս նրանք, ովքեր օգտագործում են անվասայլակներ, կարող են շրջադարձ կատարել վերելակի խցիկի ներսում, որպեսզի մտնեն և դուրս գան առանց հետընթացի: Վերելակները պետք է ներառեն ինքնակարգավորվող սարք, որը կկանգնեցնի վերելակի խցիկը յուրաքանչյուր վայրէջքից հետո: Վերելակների դռները պետք է ապահովեն 95սմ բացման հստակ լայնություն: Դրանք պետք է ամբողջությամբ բաց մնան առնվազն 8 վայրկյան՝ մարդկանց բավարար ժամանակ տրամադրելով վերելակի խցիկ մտնելու և դուրս գալու համար: Դռները պետք է ավելի երկար բաց մնան այն վերելակներում, որտեղ դրանք օգտագործող անձանց զգալի մասն ունի հաշմանդամություն: Վերելակների դռները և հարակից պատերը պետք է ունենան գունային բարձր հակադրություն: Վայրէջքի դեպքում վերելակի դռան դիմաց պետք է լինի 180x180սմ բաց տարածություն, որպեսզի մարդիկ կարողանան հեշտությամբ մանկրել, մոտենալ և հասնել վերելակի հարկերի կոճակներին: Վերելակին հարող տարածքը ևս պետք է ընդգծված գունային հակադրության մեջ լինի վերելակի ներսի տարածքի հետ:

Չարկերի համարների ցուցանակները պետք է տեղադրվեն այնպես, որ վերելակի դռները բացվելիս տեսանելի լինեն: Կապահանջվի ցուցանակների երկու տախտակ, մեկը՝ տեղադրված վերելակի վայրէջքի կոճակների մոտ, իսկ մյուսը՝ ուղիղ դռների դիմաց: Վերջինս պետք է հստակ տեսանելի լինի վերելակի խցիկի ներսից, որպեսզի մարդիկ կարողանան ստուգել, թե հատակի որ մակարդակին են հասել վերելակի խցիկից դուրս գալուց առաջ: Չամարները պետք է ոչ միայն տեսողական լինեն, այլև՝ շոշափելի, որպեսզի դրանք հնարավոր լինի տարբերակել նաև հպումով: Առավել հարմար է մեծ տպագրված, փորագրված նիշերի և բրայլյան տեքստի համադրությունը: Եթե հնարավոր չէ օգտագործել երկուսն էլ, ապա պետք է տրամադրել միայն փորագրված նիշեր: Կառավարման կոճակները պետք է ունենան առնվազն 50մմ տրամագիծ կամ լինեն 50մմx50մմ քառակուսի, փորագրված թվերով և նշաններով՝ շոշափելու միջոցով ընթերցումը հնարավոր դարձնելու համար (նկար 11): Վերելակների կոճակները պետք է տեղադրվեն ցանկացած հարակից պատից 50սմ հորիզոնական հեռավորության վրա և 90-110սմ՝ հատակի մակարդակից մինչև կոճակի կենտրոնական գիծը:



Նկար 11. Վերելակների ներսում կոճակների տեղադրման չափանիշներ

Փորագրված թվերը և նշանները պետք է բարձր լինեն կոճակից առնվազն 1,5մմ և ունենան 30մմ-40մմ բարձրություն: Չարակից կոճակների միջև հեռավորությունը պետք է լինի 10մմ: Վերելակների գործարկման կոճակները պետք է տեղադրված լինեն 100 մմ տրամագծով թեքված թիթեղի վրա և նկարում պատկերված հերթականությամբ: Յուրաքանչյուր վայրէջքի ժամանակ վերելակի ազդանշանային համակարգը պետք է տրամադրի և՛ տեսողական, և՛ ձայնային հաստատում այն մասին, որ վերելակը ժամանել է, կանգ է առել և այլն: Չանգի կոճակը սեղմելիս պետք է լուսավորվի և համապատասխան ձայնային ազդանշան ուղարկի, նույնիսկ եթե զանգն արդեն գրանցվել է: Ձայնային ազդանշանները ցուցում են շարժման ուղղությունը՝ մեկ զանգ բարձրանալու, երկու զանգ՝ իջնելու դեպքում: Վերելակի խցիկի ներսում պարտադիր է վթարային ահազանգի և երկկողմանի կապի համակարգի առկայությունը: Տազնապային համակարգը պետք է ներառի տեսանելի, շոշափելի և ձայնային ազդանշաններ: Տազնապային համակարգի զանգի կոճակը պետք է լինի դեղին՝ զանգի տեսքով: Կոճակը պետք է լուսավորվի սեղմելիս և տրամադրի լրացուցիչ ձայնային ազդանշան՝ ցույց տալու, որ ահազանգ է հնչեցվել: Կապի համակարգը պետք է ներառի կա՛մ հեռախոսի, կա՛մ մշտական բարձրախոսի վահանակ և խոսափող՝ վերելակի խցիկի պատին:

Ինչ համակարգ էլ կիրառվի, այն պետք է հարմար լինի լսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար և ներառի ինդուկտիվ կցորդիչ: Պետք է ուշադրություն դարձնել նաև վերելակում տեքստային հարմարեցումների տրամադրմանը, որպես արտակարգ կապի համակարգի մաս, որը կօգնի լսողության խնդիրներ ունեցող անձանց: Հեռախոսները պետք է տեղադրվեն պահարանի ներսում՝ հեռախոսի հիմքի վրա, հատակից 90-120սմ բարձրության և միմյանցից առնվազն 500մմ հեռավորության վրա: Հեռախոսի լարի երկարությունը պետք է լինի առնվազն 90սմ, որպեսզի հասանելի լինի յուրաքանչյուրի համար: Պահարանը պետք է հստակ նշվի հեռախոսի՝ միջազգայնորեն ճանաչված նշանով (նկար 12), որը պետք է տեղադրված լինի առնվազն 100մմ բարձրության վրա:



Նկար 12. Հեռախոսի միջազգային նշան


Վերելակի խցիկի ներսում հատակի մակերեսը պետք է լինի ամուր, դիմացկուն, անփայլ և չսայթաքող: Մուգ գույնի հատակը ցանկալի չէ: Սա տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց կարող է բաց վերելակի լիսեռ մտնելու պատրանք ստեղծել: Խորհուրդ չի տրվում խցիկի ներսում գորգ տեղադրել, քանի որ այն կարող է խոչընդոտել մանևրելուն: Գորգը կարող է նաև բորբոսի, տհաճ հոտերի առաջացման պատճառ դառնալ:

Վերելակի ներսում պատերը պետք է ունենան գունային բարձր հակադրություն հատակի և առաստաղի մակերեսների հետ: Սա կօգնի տեսողական դժվարություններ ունեցող մարդկանց ճիշտ ընկալել վերելակի ինտերիերի չափն ու ձևը: Պատերը պետք է ունենան անփայլ ծածկույթ՝ նվազագույնի հասցնելու համար անդրադարձումների հավանականությունը, որը կարող է շփոթեցնել և խուճապ առաջացնել որոշ մարդկանց մոտ: Վերելակների լույսերը պետք է այնպես տեղադրվեն, որպեսզի ապահովեն լույսի հավասարաչափ բաշխում և խուսափեն փայլի և ստվերների հավանականությունից (100 լյուքս): Վերելակների խցիկի բոլոր ներքին պատերին պետք է ամրացվեն բազրիքներ, բացի վերելակի դռները ներառող պատից (կամ պատերից): Եթե բազրիքների տեղադրությունը համընկնում է վերելակի կոճակներին, ապա, բազրիքները կարող են տեղադրվել կոճակների երկու կողմերում: Դրանք աջակցություն են այն մարդկանց, ովքեր ունեն շարժունակության, կոորդինացիայի հետ կապված դժվարություններ:

Խորհուրդ է տրվում վերելակում ունենալ նաև ծավվող հարթություն՝ նստելու համար:



ՄԱՍ 1. Հաստատության մուտք և հարակից տարածք



ՄԱՍ 2. Հաստատության տարածք



ՄԱՍ 3. Ցուցանակներ և նշաններ



ՄԱՍ 4. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ



ՄԱՍ 5. Հուզարաններ



ՄԱՍ 6. Ռեսուրս սենյակ



ՄԱՍ 7. Ապաստարան

ՄԱՍ 3.

Ցուցանակներ և նշաններ

Ցուցիչներ և չափանիշներ

- ◆ Դպրոցի ներսում առկա բոլոր դասարանների, լաբորատորիաների, սանհանգույցների, ճաշարանի, գրադարանի և այլ տարածքների նույնականացման համար կան ցուցանակներ և նշաններ:
- ◆ Առկա են ինչպես գրավոր, այնպես էլ պատկերային ցուցանակներ և նշաններ:
- ◆ Ցուցանակները և նշանները պարունակում են բրայլյան գիր, ուռուցիկ տառատեսակով տպագիր և ուռուցիկ պատկերագիր, որոնք հաղորդում են նույն տեղեկատվությունը:
- ◆ Նշանները հստակ են և միանշանակ:
- ◆ Ցուցանակների տեքստը կարճ է, պարզ և հասկանալի:
- ◆ Ցուցանակների տեքստի տառերի մեծությունը, տառատեսակը և դասավորությունը հստակ են և ընթեռնելի:
- ◆ Տառերի նվազագույն չափը 1,5սմ է, և կախված կարդալու նախատեսված հեռավորությունից՝ յուրաքանչյուր 1 մետրի համար ավելանում է 2-3սմ-ով:
- ◆ Ցուցանակները տեղադրված են դռների սողնակային կողմում՝ փեղկից 5-10սմ հեռավորության վրա:
- ◆ Պատերին փակցված բոլոր տեսակի ցուցանակները և նշանները տեղադրված են հատակից 120-160սմ բարձրության վրա (տարրական և միջին դպրոցներում՝ 100-140սմ):
- ◆ Միջանցքներում առաստաղից կախված ցուցանակները հատակից բարձր են առնվազն 220սմ:
- ◆ Ցուցանակները և նշանները ունեն չանդրադարձնող մակերես:
- ◆ Տեքստի կամ պատկերագրերի և դրանց միջավայրի միջև առկա է գունային բարձր հակադրություն:
- ◆ Լուսավորվող նշանների առկայության դեպքում կարմիր տեքստը բաց ֆոնի վրա է:
- ◆ Տարհանման պլանն առկա է հաստատության յուրաքանչյուր հարկում և համապատասխանում է վերը նշված չափանիշներին:

Ցուցանակների և նշանների հիմնական նպատակը մարդկանց պարզ ձևաչափով տեղեկություն հաղորդելն է՝ տեղանքում արագ և անվտանգ կողմնորոշվելու համար: Դրանք մատնանշում են վայրերը, ճանապարհները, շինությունների ներսում առկա տարբեր սենյակները, հասանելի ծառայությունները կամ այլ առանձնահատկություններ: Ցուցանակներն ու նշանները կարևոր են բոլորի համար: Դրանց բացակայությունը կարող է շփոթեցնել և ապակողմնորոշել մարդկանց:

Ցուցանակները և նշաններն ըստ իրենց գործառնականության, պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի (Royal New Zealand foundation of the blind, 2013).


- 1) տեղեկատվական, որոնք իրազեկում են որևէ օբյեկտի կամ ծառայության առկայության մասին,
- 2) ուղղորդող, որոնք օգնում են մի կետից մեկ այլ կետ հասնելու ճանապարհին (ուղղորդող են համարվում նաև շենքի հատակագծերը, մոդելները, քարտեզները, տարհանման պլանները և այլն) (Նկար 13, 14),
- 3) տեղային, որոնք նախատեսված են օբյեկտի կոնկրետ տեղը նույնականացնելու համար:

Դպրոցական միջավայրում նման ցուցանակների և նշանների առկայությունն օգտակար է կրթության գործընթացում ներգրավված բոլոր օղակների և դպրոցի տարածք մուտք գործող յուրաքանչյուր անձի համար: Երբ խոսքը վերաբերում է երեխաներին, հարկ է նշել, որ ցուցանակների և նշանների առկայությունը հնարավորություն է տալիս նրանց լինել առավել ինքնուրույն: Հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք կամ հաշմանդամություն ունեցող երեխաների համար դրանք խիստ անհրաժեշտ են՝ դպրոցական միջավայրում կողմնորոշվելու և հնարավորինս ինքնուրույն տեղաշարժվելու համար: Հաշվի առնելով այս հանգամանքը, դպրոցի տարածքում անհրաժեշտ է ունենալ այնպիսի մատչելի ցուցանակներ և նշաններ, որոնք հասանելի կլինեն բոլոր երեխաների համար:

Գոյություն ունեն փորձարկված և հաստատված միջազգային չափանիշներ, որոնց հետևելու պարագայում մենք կարող ենք ստեղծել և կիրառել առավել մատչելի և բոլորին հասանելի ցուցանակներ ու նշաններ:



Նկար 13. Ելքի ցուցանակ




Նկար 14. Տարհանման պլանի օրինակ

Գտնվելու վայրերը

Տեղեկատվական ցուցանակները պետք է տեղադրվեն մուտքի դռան հարևանությամբ, լավ լուսավորված և հեշտ տեսանելի վայրում: Դպրոցի շենքերի գլխավոր մուտքից անմիջապես հետո պետք է լինի ուղղորդող պլան: Ուղղորդող նշանները պետք է լինեն շենքի բոլոր այն հատվածներում, որտեղ անհրաժեշտ է որոշել, թե որ կողմ պետք է գնալ շենքի նախընտրելի հատվածը կամ կոնկրետ սենյակը հասնելու համար: Նման ուղղորդող նշանները պետք է ունենան տրամաբանական հաջորդականություն՝ սկզբից մինչև առկա բոլոր ուղիների ավարտը: Չուզարանների տեղը ցուցող նշանները պետք է լինեն հատվածի կամ շենքի բոլոր մասերում: Դրանք սահմանում են բոլոր մուտքերը, ելքերը և աստիճանները: Չարկերի համարները պետք է տեղադրվեն յուրաքանչյուր հարկում աստիճանների, իսկ առկայության դեպքում նաև վերելակի մուտքի մոտ (World Disability Foundation):

Տեղադրման չափանիշները

Նշանները պետք է տեղադրվեն այնպես, որ մարդիկ կարողանան դրանք հստակ տեսնել նստած դիրքից, քայլելիս և կանգնած վիճակում: Դրանք պետք է տեղադրված լինեն դռան սողնակի կողմում՝ փեղկից 5-10սմ հեռավորության վրա և հատակի ծածկույթից 120-160սմ բարձրության վրա (նկար 15, 16):



Նկար 15. Դռների մոտ փակցված ցուցանակների տեղադրման չափանիշներ



Նկար 16. Առաստաղից կախված ցուցանակների տեղադրման չափանիշներ


Այն հատվածներում, որտեղ կան ցուցանակների տեսանելիությանը խոչընդոտող հանգամանքներ, դրանք պետք է տեղադրվեն հատակի ծածկույթից նվազագույնը 220սմ բարձրության վրա: Այս բարձրությունը նախատեսված է նաև առաստաղների կամ պատերի վրա տեղադրված ցուցանակների համար:

Չարկ է նշել, որ ցուցանակների տեղակայման այս տարբերակի ընտրության դեպքում պետք է նախատեսել նաև երկրորդ լրացուցիչ նշանը՝ առաջարկվող հասանելի բարձրության վրա (120-160սմ):

Մատչելի լինելը

Մատչելիության չափանիշներին համապատասխանելու համար անհրաժեշտ է որպեսզի դպրոցի տարածքում առկա լինեն ինչպես գրավոր, այնպես էլ պատկերագրերով ցուցանակներ և նշաններ: Առավել մատչելի է, երբ դրանք պարունակում են բրայլյան գիր, ուռուցիկ

տառատեսակով տպագիր և պատկերագիր տարբերակներ, որոնք հաղորդում են նույն տեղեկատվությունը, հստակ են և միանշանակ (նկար 17): Ցուցանակների տեքստը պետք է լինի կարճ և պարզ, ցանկալի չէ հապավումների կիրառությունը (Royal New Zealand foundation of the blind, 2013):



Նկար 17. Մատչելիության սկզբունքներին համապատասխանող ցուցանակներ զուգարանների համար

Տառատեսակը, տառաչափը և տպագրությունը

Բոլոր այն դեպքերում, երբ ցուցանակները կամ նշանները տեքստային տարրեր են պարունակում, անհրաժեշտ է մտածել նաև դրանց հասանելիության և մատչելիության մասին: Առավել նպատակահարմար է օգտագործել հասանելիությունն ապահովող այնպիսի տառատեսակներ, ինչպիսիք են Arial, Helvetica, Lucida Sans, Verdana, MS Sans Serif, Tahoma (Apelt, Crawford, David, 2007): Տառերի նվազագույն չափը պետք է լինի 1,5 սմ, և, կախված այն հեռավորությունից, որը նախատեսված է կարդալու համար, այն պետք է մեծացնել յուրաքանչյուր 1 մետրի համար 2-3սմ-ով: Տառերի միջև նվազագույն տարածությունը պետք է լինի 2մմ, իսկ բառերի միջև՝ 10մմ: Տառի հատվածի հաստությունը պետք է լինի 2-7մմ:

Ցուցանակների վրա առկա թվերը, տառերը, նշանները, խորհրդանիշերը ցուցանակի ընդհանուր հարթությունից պետք է լինեն առնվազն 1-2մմ բարձր, որպեսզի դրանք հնարավոր լինի կարդալ շոշափելով, քանի որ տեսողության խանգարումներ ունեցող ոչ բոլոր երեխաներն են կարողանում կարդալ Բրայլի տառերը: Պետք է բացառել փորագրված տպագիր տառերի կիրառումը, քանի որ այդ դեպքում շոշափելով կարդալը շատ դժվար է (World Disability Foundation):

Գուճային և լուսային պահանջները

Ցուցանակների և նշանների մակերեսները չպետք է փայլեն: Տպագրության ժամանակ նախապատվությունը պետք է տալ նվազագույն փայլով կամ փայլատ մակերեսով տարբերակներին, իսկ տեղադրելիս հաշվի առնել նաև լույսը, որ կարող է արտացոլվել ցուցանակի վրա:

Տեքստի/խորհրդանիշերի և դրանց ֆոնի միջև պետք է լինի գուճային բարձր, բայց չխանգարող հակադրություն: Այնպիսի գույների օգտագործումը, ինչպիսիք են կանաչը, դեղինը, նարնջագույնը, կարմիրը և վարդագույնը, նվազեցնում է ցուցանակների մատչելիությունը: Տպագիր ցուցանակների պարագայում անհրաժեշտ է խուսափել կարմիր-կանաչ համակցությունից: Լուսավորվող նշանների դեպքում կարմիր տեքստը պետք է լինի բաց ֆոնի վրա:



ՄԱՍ 1. Հաստատության մուտք և հարակից տարածք



ՄԱՍ 2. Հաստատության տարածք



ՄԱՍ 3. Ցուցանակներ և նշաններ



ՄԱՍ 4. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ



ՄԱՍ 5. Հուգարաններ



ՄԱՍ 6. Ռեհուրս սենյակ



ՄԱՍ 7. Ապաստարան

ՄԱՍ 4.

Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ

Ցուցիչներ և չափանիշներ


- Աշակերտական սեղանների շարքերի, առկա պահարանների և մնացած գույքի միջև հեռավորությունը առնվազն 90սմ է:
- Դասասենյակի բոլոր այն հատվածներում, որտեղ կա շրջադարձ կատարելու անհրաժեշտություն, առկա է 150սմ տարածություն:
- Դասասենյակները կահավորված են տարիքային չափանիշներին համապատասխան աշակերտական սեղաններով և աթոռներով:
- Դասասենյակի սեղաններն ու աթոռները հնարավոր է տեղաշարժել ըստ անհրաժեշտության:
- Կան աշակերտական սեղաններ, որոնք հարմարեցված են անվասայլակ օգտագործող սովորողների համար:
- Պատուհանները սկսվում են 60սմ բարձրությունից:
- Գրատախտակը տեղադրված է հատակից 50սմ բարձրության վրա:
- Գրատախտակների մակերեսը փայլատ է, մուգ կանաչ կամ մուգ դարչնագույն գույնավորմամբ:
- Դասասենյակներում առկա պահարանների դարակները գտնվում են հատակից 38-120սմ բարձրության վրա:
- Դասասենյակներն ունեն բավարար բնական և արհեստական լուսավորություն:
- Դասասենյակներում առկա են բավարար քանակությամբ վարդակներ (տարրական դասարաններում՝ պաշտպանիչ ծածկոցներով):
- Սենյակների ցուցանակներն առանձնանում են գույնային բարձր հակադրությամբ և մեծ տառաչափով:
- Սենյակների նույնականացման նշանները ներառում են սենյակի անվանումը և համարը ինչպես բրայյան գրով, այնպես էլ շոշափելի տառերով:
- Սենյակների հատակի մակերեսը միագույն է, ամուր, դիմացկուն, հարթ և լավ պահպանված ծածկույթով:
- Գործնական աշխատանքների սենյակները, լաբորատորիաները, ընթերցասրահները և դասասենյակները լավ լուսավորված են՝ համապատասխան գործողությունների իրականացումը հեշտացնելու համար:
- Դասարաններում կան վարագույներ կամ շերտավարագույրներ գրատախտակների փայլը վերահսկելու համար:

Դպրոցի շենքում կան բազմապիսի ենթակառուցվածքներ, ինչպես օրինակ դասասենյակները, լաբորատորիաները, մարզադահլիճը, հանդիսությունների դահլիճը, ճաշարանը և այլն, որոնցից կրթության ողջ ընթացքում անընդհատ օգտվում են բոլոր երեխաները՝ իրականացնելով որոշակի աշխատանքներ և գործողություններ: Այդ իսկ պատճառով բոլոր այդ տարածքների մատչելիության և հարմարավետության ապահովումն առաջնահերթ խնդիր է:


Դասասենյակները հանդիսանում են դպրոցների շենքերի հիմնական մասը զբաղեցնող՝ առարկայական ծրագրերի իրականացման համար նախատեսված տարածքներ: Կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա ազատ տեղաշարժվել դասասենյակում՝ հասանելիություն ունենալով պահարաններում տեղադրված բոլոր անհրաժեշտ դիզայնային պարագաներին, սարքերին, դասասենյակում առկա վարդակներին, գրատախտակին և այլն: Խոսելով դասասենյակների հասանելիությունից և մատչելիությունից՝ պետք է հաշվի առնել դասասենյակների մակերեսի արդյունավետ օգտագործումը, ներսում առկա գույքի դասավորվածությունը և կիրառման տեսանկյունից դրանց հարմարավետությունը, բնական և արհեստական լուսավորումը, դասասենյակի ակուստիկան և ֆոնային աղմուկի առկայությունը:

Գույքի դասավորվածություն

Առավել հարմարավետ և մատչելի դասասենյակներ ունենալու համար կարևոր է ոչ միայն դրանց մակերեսի մեծությունը, այլև գրագետ կահավորումը: Հաճախ նույնիսկ մեծ մակերես ունեցող դասասենյակների ոչ ճիշտ կահավորումը ստեղծում է արհեստական խոչընդոտներ: Դասասենյակների կահավորումն իրականացնելիս պետք է հնարավորինս խուսափել այն ավելորդ գույքով ծանրաբեռնելուց՝ հատկապես մուտքի դռան մոտ անհրաժեշտ է հաշվի առնել հասանելի մակերեսը, տվյալ դասասենյակում սովորողների կարիքները և առանձնահատկությունները: Անվասայլակ, քայլակ, տեղաշարժման համար նախատեսված այլ աջակցող սարքեր օգտագործող սովորողների անխոչընդոտ և ինքնուրույն տեղաշարժման համար դասասենյակում անհրաժեշտ է ապահովել առնվազն 90սմ հեռավորություն աշակերտական սեղանների շարքերի, աշակերտական սեղանների և պահարանների կամ առկա այլ գույքի միջև: Բոլոր այն հատվածներում, որտեղ կարող է առաջանալ 90°-180° շրջադարձ կատարելու անհրաժեշտություն, ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի N263-Ն հրամանի, պետք է ապահովել 140սմ ազատ տարածք (նկար 19), իսկ ըստ միջազգային որոշ նորմերի՝ նվազագույնը 150սմ լայնությամբ և 200սմ երկարությամբ ազատ տարածք (նկար 18) (World Disability Foundatio):



Նկար 18. Շենքի ներսում անվասայլակով 90-180° շրջադարձ կատարելու համար անհրաժեշտ տարածք՝ ըստ միջազգային չափանիշների



Նկար 19. Շենքի ներսում անվասայլակով 90-180° շրջադարձ կատարելու համար անհրաժեշտ տարածք՝ ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի N263-Ն հրամանի

Ստեղծելով տվյալ դասասենյակի և դասարանի համար գույքի դասավորվածության առավել հարմարավետ տարբերակը՝ պետք է խուսափել հետագայում հաճախակի փոփոխություններ իրականացնելուց, քանի որ դա կարող է ավելորդ դժվարություններ ստեղծել տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար:


Նստարաններ

Ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N12-Ն հրամանի՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնական տարածքներում սովորողների համար պետք է տեղադրված լինեն 6 տարբեր չափերի նստարաններ, որոնք դասակարգված են ըստ երեխաների հասակի և տարբերված են ըստ գույնի (աղյուսակ 1, նկար 20):

Աղյուսակ 1.


Կահույքի չափերը և մակնշումն ըստ սովորողների սեղանների և աթոռների

Կահույքի համարն՝ ըստ 11015-93, 11016-93 ԳՕՍՏ-երի	Հասակի խումբը (մմ)	Սեղանի բացվող մասի եզրի բարձրությունը հատակից, ըստ ԳՕՍՏ 11015-93 (մմ)	Մակնիշի գույնը	Նստատեղի առջևի եզրի բարձրությունը հատակից, ԳՕՍՏ 11016-93 (մմ)
1	1000-1150	460	Նարնջագույն	260
2	1150-1300	520	Մանուշակագույն	300
3	1300-1450	580	Դեղին	340
4	1450-1600	640	Կարմիր	380
5	1600-1750	700	Կանաչ	420
6	1750-ից բարձր	760	Երկնագույն	460



Նկար 20. Դպրոցական աթոռների և սեղանների չափանիշները սովորողների համար

Հանրակրթական ուսումնական հաստատություններում պետք է լինեն նաև անվասայլակ օգտագործող սովորողների համար նախատեսված սեղաններ, կարգավորվող սեղաններ և կարգավորվող աթոռներ, որոնք ըստ անհրաժեշտության կտեղադրվեն համապատասխան դասասենյակներում: Որպեսզի սեղանները հարմարավետ լինեն անվասայլակ օգտագործող երեխաների համար, դրանք պետք է ունենան 75-90սմ բարձրություն, իսկ սեղանի տակ առնվազն 60սմ խորություն (նկար 21) (World Disability Foundation):



Նկար 21. Դպրոցական սեղանների չափանիշներ անվասայլակով տեղաշարժվող սովորողների համար

Գրատախտակ


Գրատախտակը ցանկալի է տեղադրել հատակից 50սմ բարձրության վրա, ինչի արդյունքում գրատախտակից օգտվելը հարմարավետ և հասանելի է դառնում ոչ միայն այն սովորողների համար, ովքեր տեղաշարժվում են անվասայլակով, այլև նրանց համար, ովքեր ավելի կարճահասակ են:

Գրատախտակներից օգտվելն առավել հասանելի դարձնելու համար կարևոր է ոչ միայն դրանց տեղադրման բարձրությունը, այլև մակերեսը: Առավել մատչելի են համարվում այն գրատախտակները, որոնց մակերեսն ունի մուգ կանաչ կամ մուգ դարչնագույն գունավորում և անփայլ է (ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017թ-ի N 12-Ն հրաման): Ցանկալի է դասասենյակներում ունենալ նաև վարագույներ կամ շերտավարագույրներ՝ անհրաժեշտության դեպքում գրատախտակների փայլը վերահսկելու համար:


Պահարաններ

Դասասենյակում առկա պահարաններում տեղադրված են հիմնականում դիզակտիկ պարագաներ, նյութեր և սարքեր, որոնցից, անհրաժեշտության դեպքում, օգտվում են սովորողները: Կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր սովորող հնարավորություն ունենա ինքնուրույն պահարանից վերցնել այն, ինչ իրեն անհրաժեշտ է: Բոլորին և յուրաքանչյուրին հասանելիություն ապահովելու համար դասասենյակներում առկա պահարանների դարակները պետք է լինեն հատակից 30-130սմ բարձրության վրա: Հարկ է նշել, սակայն, որ 30-130սմ բարձրությունն ընդունելի է այն դեպքում, երբ անվասայլակով տեղաշարժվող սովորողները հնարավորություն ունեն կողքից մոտենալ պահարաններին (նկար 23): Այն դեպքում, երբ պահարաններին հնարավոր է մոտենալ միայն դիմացից, դրանց բարձրությունը պետք է լինի 38-120սմ (նկար 22) (UNICEF, 2016; World Disability Foundation):

Իհարկե, այն դեպքերում, երբ դասասենյակներում արդեն իսկ առկա են պահարաններ, որոնք ունեն վերը նշվածից ավելի կամ պակաս բարձրության վրա գտնվող դարակներ, անհրաժեշտ է առնվազն առավել հաճախ օգտագործվող նյութերը տեղադրել այն դարակաշարերում, որոնք հասանելիություն են ապահովում բոլոր սովորողների համար:




Նկար 22. Պահարանների դարակների չափանիշներն անվասայլակով դիմացից մոտենալու հնարավորության դեպքում



Նկար 23. Պահարանների դարակների չափանիշներն անվասայլակով կողքից մոտենալու հնարավորության դեպքում

Պատուհաններ

Դասասենյակները, ինչպես և շենքերի այլ տարածքները, բնական լուսավորությամբ ապահովելու միջոցը պատուհաններն են: Բացի այդ, պատուհանների առկայությունը ստեղծում է ապահովության զգացում, քանի որ հնարավորություն է տալիս մարդուն նախապես տեսնել և տեղեկանալ, թե ինչ է կատարվում բակում կամ ինչ եղանակ է մինչև շենքից դուրս գալը: Խոսելով պատուհանների հասանելիությունից՝ պետք է հաշվի առնել, որ դասասենյակներում տեղադրվող պատուհանների ստորին հատվածը պետք է լինի առնվազն 15սմ և չգերազանցի 80սմ-ը, այնպես որ բակը տեսանելի լինի երեխաներին և կանգնած, և նստած դիրքից (նկար 24):



Նկար 24. Դասարաններում պատուհանների տեղադրման չափանիշներ

Լուսավորություն

Դասասենյակների լուսավորությունը զգալի ազդեցություն է ունենում սովորողների ուշադրության կենտրոնացման և աշխատունակության մակարդակի վրա: Սովորողների աշխատանքային տեղերն անհրաժեշտ է դասավորել այնպես, որպեսզի ապահովվի ձախակողմյան բնական լուսավորություն: Բնական լուսավորման պարագայում սովորողների սեղանների աշխատանքային մակերեսները պետք է պաշտպանված լինեն արևի ուղղակի ճառագայթներից, քանի որ սպիտակ թղթի վրա արտացոլված արևի լույսից աչքերը լարվում են և շուտ հոգնում:

Անկախ լուսավորման տեսակից, կարևոր է, որպեսզի դասասենյակում լինի համաչափ լուսավորություն և լույսի հաստատուն մակարդակ (ՀՀ առողջապահության նախարարի 2017թ-ի մարտի 28-ի N 12-Ն հրաման): Արդյունքում սովորողները չեն զգա լույսի մակարդակի կտրուկ փոփոխություն, երբ հայացքն աշակերտական սեղանից տեղափոխեն դեպի ուսուցիչը կամ գրատախտակը:

Դասասենյակների լուսավորման միջազգային ստանդարտները տատանվում են 300-ից մինչև 500 լյուքս-ի միջև: ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N12-Ն հրամանով ՀՀ-ում գործող ուսումնական հաստատությունների համար սահմանված են լուսավորման մակարդակի հետևյալ ցուցանիշները.

- 1) աշխատանքային սեղանների վրա՝ (ուսումնական շենքերում և կաբինետներում՝ բացառությամբ՝ տեխնոլոգիայի և նկարչության կաբինետների, գրադարանում, ուսուցչանոցում) ոչ պակաս քան 300 լյուքս,
- 2) գրատախտակի վրա՝ 300-500 լյուքս,
- 3) տեխնոլոգիայի և նկարչության կաբինետներում՝ ոչ պակաս քան 500 լյուքս,
- 4) հանդիսությունների սրահներում և մարզադահլիճում (հատակին)՝ ոչ պակաս քան 200 լյուքս,
- 5) միջանցքներում (հատակին)՝ ոչ պակաս քան 150 լյուքս:

Նշված ցուցանիշներին անհրաժեշտ է հետևել ինչպես բնական, այնպես էլ արհեստական լուսավորման դեպքում:

Իհարկե բնական լուսավորումը կարևոր գործոն է բոլոր դպրոցներում, սակայն արհեստական, լուսավորման կարգավորվող համակարգերի ամկայությունը դասասենյակներում մեծ առավելություն է, քանի որ դրանք հնարավորություն են տալիս բարձրացնել կամ իջեցնել լուսավորության մակարդակը դասարանի որոշ հատվածներում՝ հաշվի առնելով սովորողների կարիքները: Հատկապես տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար լուսավորության այս տարբերակը արդյունավետ է, քանի որ շատ դեպքերում, կախված նաև առաջադրանքի տեսակից, նրանք կարող են լրացուցիչ լուսավորման կարիք ունենալ:

Վարդակներ

Կրթական հաստատություններում վարդակներ տեղադրելիս պետք է հաշվի առնել այն, թե ինչ նպատակով է օգտագործվելու տվյալ սենյակը, բացի ստանդարտ վարդակներից, արդյոք անհրաժեշտ են լինելու USB վարդակներ և անվտանգության ինչ մեխանիզմներ պետք է ապահովվեն:

o Սենյակի նշանակություն

Այն, թե ինչ նպատակով է կիրառվելու տվյալ սենյակը, կարող է օգնել որոշել, թե քանի վարդակ է անհրաժեշտ և որտեղ դրանք պետք է տեղադրվեն: Սովորաբար համակարգչային լաբորատորիաներում և մեդիա սենյակներում ավելի շատ վարդակներ են լինում, մինչդեռ դասասենյակում կարող ենք հանդիպել միայն մի քանի վարդակների: Հարկ է նշել, սակայն, որ դասասենյակներում բավարար քանակությամբ վարդակներ ունենալը խիստ անհրաժեշտություն է: Դասարաններում կարող են լինել երեխաներ, որոնք օգտագործում են մարտկոց պարունակող աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ, որոնք կարող են լիցքավորման կարիք ունենալ: Բացի այդ, դասի ընթացքում զուգահեռ մի քանի սարք միացնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ (օրինակ, համակարգիչ, պրոեկտոր):

Ընդհանրապես, կարևոր է նախքան վարդակներ տեղադրելը, պատկերացնել դասասենյակի դասավորությունը, քանի որ դա թույլ կտա վարդակները տեղադրել առավել օգտակար վայրերում:

o Անվտանգություն

Դպրոցական միջավայրում հատուկ ուշադրություն պետք է դարձնել վարդակների անվտանգությանը: Այն դասարաններում, որտեղ կրթություն են ստանում կրտսեր դպրոցականներ, ցանկալի է ունենալ պաշտպանիչ ծածկոցներով վարդակներ՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

o USB վարդակներ

Դպրոցական որոշ սենյակների համար USB վարդակները կարող են շատ օգտակար լինել: iPad-ներից և պլանշետներից մինչև ստեղնաշարեր և խելացի տեխնոլոգիաներ, կան մի շարք սարքեր, որոնք կարող են ուղղակիորեն միացվել USB ելքին: Այսպիսի լուծումները ևս շատ անվտանգ են և խնայում են ստանդարտ վարդակները, հնարավորություն տալով դրանք օգտագործել այլ պահանջների համար:



ՄԱՍ 1. Հաստատության մուտք և հարակից տարածք



ՄԱՍ 2. Հաստատության տարածք



ՄԱՍ 3. Ցուցանակներ և նշաններ



ՄԱՍ 4. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ



ՄԱՍ 5. Հուզարաններ



ՄԱՍ 6. Ռեսուրս սենյակ



ՄԱՍ 7. Ապաստարան

ՄԱՍ 5.

Չուգարաններ

Ցուցիչներ և չափանիշներ

- ◆ Սանհանգույցի տարածքն այնքան մեծ է, որ թույլ է տալիս անվասայլակ օգտագործող սովորողին անցնել այլ անձանց կողքով:
- ◆ Չուգարանների խցիկներն ունեն կողավող դռներ անվտանգության և գաղտնիության պահպանման համար:
- ◆ Չարմարեցված զուգարանների խցիկներն ունեն առնվազն 90սմ լայնությամբ դուռ:
- ◆ Չարմարեցված զուգարանները և/կամ առաձին հարմարեցված խցիկն այնքան մեծ է, որ հնարավորություն է տալիս անվասայլակ օգտագործող սովորողին մտնել և անհրաժեշտության դեպքում պտտվել ներսում:
- ◆ Սանհանգույցները լավ լուսավորված են:
- ◆ Սանհանգույցներում առկա է մաքուր, հոսող ջուր:
- ◆ Խմելու ջրի և լվացարանների ծորակները հնարավոր է միացնել ձեռքով կամ ոտքով:
- ◆ Լվացարանները տեղադրված են տարբեր բարձրությունների վրա:
- ◆ Լվացարանները գտնվում են զուգարանների մոտ:
- ◆ Լվացարանների ներքևի հատվածում ապահովված է առնվազն 20սմ բաց տարածք՝ լվացարանին անվասայլակով անխոչընդոտ մոտենալու համար:
- ◆ Չարմարեցված զուգարանների կողքի պատերին տեղադրված են բռնածողեր:
- ◆ Առկա են բռնակներ կամ բռնածողեր, անվասայլակներից մինչև զուգարանակոնք ինքնուրույն հասնելու համար:

Գաղտնիք չէ, որ մաքուր ջուրն ու անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանների առկայությունը երեխաների առողջության պահպանման գրավականն են: Բացի այդ, նշված պարագաների հասանելիությունը նպաստում է երեխաների մոտ առողջ ապրելակերպի վերաբերյալ տարրական գիտելիքների և հմտությունների ձևավորմանը: Ուստի, բոլոր ուսումնական հաստատությունները պետք է ապահովեն մատչելի ֆիզիկական միջավայր սանհանգույցի տարածքում: Հասանելիություն և մատչելիություն բոլորի համար հնարավոր է ապահովել, եթե գործողությունների հիմքում ընկած են **համընդհանուր դիզայնի** սկզբունքները: Այս հայեցակարգը ճանաչում և ընդունում է մարդկանց ֆունկցիոնալ կարողությունների բազմազանությունը և խրախուսում է համընդհանուր դիզայնի սկզբունքներով կառուցված և կահավորված շինությունները, որոնք կարող են հասանելի լինել անհատների ավելի լայն շրջանակի համար:


«Համընդհանուր դիզայնն արտադրանքի և միջավայրերի նախագծումն է բոլոր մարդկանց օգտագործման համար՝ հնարավորինս բացառելով հետագա հարմարեցման կամ փոփոխությունների անհրաժեշտությունը»

Ռոն Մեյս

Սովորողները տարբերվում են իրենց տարիքով, ֆիզիկական կառուցվածքով և գործառնական կարողություններով, ոմանք ունեն ժամանակավոր կամ մշտական հաշմանդամություն, ոմանք՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Այս ամենը կարող է ազդել նրանց ճկունության, տոկունության, տեսողության, լսողության, հավասարակշռության, շարժունակության և այլ կարողությունների ու հմտությունների վրա: Այդուհանդերձ, տարբեր կարողություններ, ուժ և հասակ ունեցող երեխաները պետք է հնարավորություն ունենան հարմարավետ, անվտանգ և որքան հնարավոր է ինքնուրույն օգտվել բոլոր անհրաժեշտ միջոցներից՝ դպրոցում իրենց կարիքները հոգալու և ինքնուրույն գործելու համար (UNICEF, 2014):


Սանհանգույցի տարածքը

Սանհանգույցների և զուգարանների համար սահմանված այնպիսի միջազգային չափանիշները, ինչպիսիք են սանհանգույցի մուտքի և զուգարանների խցիկների դռների և շրջադարձային ազատ տարածքի չափերը, սանտեխնիկական սարքավորումների, հայելիների, կախիչների, դարակների և այլ տարրերի առկայությունն ու դրանց չափերը, ընդհանուր առմամբ վերաբերում են նաև ուսումնական հաստատություններին: Ըստ այդմ, առանձին զուգարաններում պետք է ապահովված լինի առնվազն 140-150սմ տրամագծով շրջանի չափով ազատ տարածք (նկար 25)՝ անվասայլակով տեղաշարժող երեխաներին ազատ շարժվելու և մանևրելու հնարավորություն տալու համար (World Disability Foundation): Չուգարանների բոլոր խցիկները պարտադիր պետք է ունենան կողավող դռներ անվտանգության և գաղտնիության պահպանման համար:



Նկար 25. Չուզարաններում անվասայլակով շրջադարձ կատարելու համար անհրաժեշտ տարածք

Եթե ուսումնական հաստատությունը չունի հարմարեցված զուգարաններ, ապա շենքի բարելավման կամ փոփոխությունների առաջիկա ծրագրերում և նախագծերում պարտադիր պետք է նախատել այն: Կառուցողական կամ վերանորոգման աշխատանքների պլանավորման շրջանակով կարելի է որոշել, թե տեխնիկական որ պահանջներն են կիրառվելու: Այն դեպքում, երբ սանհանգույցի որոշ կարևոր, բայց ոչ բոլոր տարրերն են փոփոխվելու, ապա միայն փոփոխվածները պետք է լինեն համընդհանուր դիզայնի սկզբունքներին համապատասխան, իսկ եթե զուգարանները կամ սանհանգույցի տարածքը վերակառուցվել է կամ կառուցվել է նորը, ապա այն ամբողջությամբ պետք է համապատասխանի մատչելիության չափանիշներին: Փոփոխությունների դեպքում մատչելիության չափանիշներին համապատասխանելիություն չի պահանջվում միայն այն դեպքերում, երբ այն «տեխնիկապես անհնարին է», այսինքն իրագործվելու քիչ հավանականություն ունի, քանի որ շենքի գոյություն ունեցող կառուցվածքային պայմանները կպահանջեն քանդել կամ վերակառուցել հիմնական կրող պատերը: Օրինակ՝ երկու զուգարանի խցիկները միացնել՝ հարմարեցված խցիկ ստեղծելու համար, կարող է տեխնիկապես անիրագործելի լինել, եթե միջանկյալ պատը հիմնական է: Նման դեպքերում անհրաժեշտ է գտնել այլընտրանք, օրինակ՝ նախագծել և կառուցել նոր զուգարան շենքի այլ հատվածում, որտեղ այն հնարավոր կլինի՝ հաշվի առնելով կառույցի առանձնահատկությունները: Հարկ է նշել նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ հարմարեցվում է հաստատության միայն մեկ սանհանգույցը, ապա այն պետք է գտնվի հարմարեցված մուտքի տարածքում (Manley, 2016):



Նկար 26. Անվասայլակով հասանելի զուգարանների չափանիշներ

Անվասայլակով հասանելի զուգարանները պետք է ունենան նվազագույնը 220x220սմ տարածություն և դեպի դուրս բացվող՝ 90սմ լայնություն ունեցող դռներ (Նկար 26): Եթե հաստատությունում չկա համապատասխան տարածք, ապա մատչելի զուգարանի խցիկներ կարելի է ստանալ՝ վերանորոգելով և իրար միացնելով երկու սովորական խցիկները: Այն դեպքում, երբ հարմարեցված զուգարանն ունի 220x220սմ տարածք, առավել հարմար է լվացարանը տեղադրել անկյունում: Լվացարանի չափը պատից մինչև դիմացի եզրն ընկած հատվածում պետք է լինի 43-60սմ, ներքևի եզրի բարձրությունը հատակից՝ 65-68սմ, իսկ վերին եզրը՝ 70-80սմ: Ճարժողական դժվարություններ ունեցող սովորողների մեծամասնության համար անհրաժեշտ են համապատասխան բռնածողեր, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն հասնել իրենց անվասայլակներից մինչև զուգարանակոնք: Նման բռնածողեր անհրաժեշտ է ունենալ նաև լվացարանների և միզարանների տարածքում, որոնք կարող են ձգվել պատի ամբողջ երկայնքով կամ ընդհատումներով: Չուգարանակոնքին նստելու և վեր կենալու համար բռնածողերն անհրաժեշտ է ամրացնել հետին պատին՝ հորիզոնական դիրքով, նվազագույնը՝ 65-90սմ երկարությամբ: Հարմարեցված սանհանգույցներում անհրաժեշտ է ունենալ նաև ուղղահայաց բռնածողեր, որոնց օգնությամբ շարժունակության դժվարություն ունեցող սովորողները կարող են ընդունել հարմար դիրք, այնուհետև՝ ուղղվել: Անհրաժեշտ են նաև հորիզոնական բռնածողեր, որոնք կօգնեն պահել հավասարակշռությունը և կանգնել, երբ երեխան փորձում է հասնել ջրին (World Disability Foundation; UNICEF, 2016):

Լուսավորություն և ցուցանակներ

Սանհանգույցների և զուգարանների համար սահմանվում են նաև լուսավորության և ցուցանակների պարտադիր չափանիշներ: Հաստատությունում պետք է առկա լինեն մատչելի ցուցանակներ, որոնք հնարավորություն կտան հեշտությամբ նույնականացնելու սանհանգույցների տեղը:

Ցանկալի է, որ ցուցանակները ներառեն և՛ տեքստ, և՛ պատկերներ, ունենան գունային բարձր հակադրություն, մեծ տառաչափ և տեսանելի լինեն հեռվից (ցուցանակների մասին ավելի մանրամասն տե՛ս սույն ձեռնարկի մաս 3-ում):

Սանհանգույցները պետք է լինեն լավ լուսավորված: Արհեստական լուսավորման դեպքում լուսավորության մակարդակը լյումինեսցենտային լամպերի կիրառման պարագայում 150 լյուքս է, իսկ շիկացման լամպերի դեպքում 75 լյուքս (ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրաման):

Լվացարաններ և մաքուր ջուր

Ձուգարաններում բոլորին հասանելի վվացարաններ, հոսող մաքուր ջուր և խմելու ջուր ունենալը կարևոր հանգամանք է ցանկացած հաստատության և յուրաքանչյուր մարդու համար: Սա նշանակում է, որ սանհանգույցների նախագծումը կամ արդեն առկա սանհանգույցների վերանորոգումն ու վերակառուցումը պետք է իրականացնել մտածված:

Ուսումնական հաստատությունների սանհանգույցներում կամ զուգարաններում մատչելի վվացարանների տեղադրումը դեռևս բավարար չէ դրանց հասանելիությունից խոսելու համար: Որոշ դեպքերում հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն օգնության կարիք կունենան ոչ միայն զուգարան հասնելու համար, այլ նաև կարիքները հոգալու, ձեռքերը վվանալու կամ ուղղակի մաքուր ջուր խմելու ընթացքում:

Սա նշանակում է, որ հիգիենիկ բոլոր պարագաներն ու սարքավորումները պետք է ընտրված լինեն համընդհանուր դիզայնի սկզբունքներին համապատասխան և հասանելի լինեն բոլոր սովորողներին:

Լվացարաններ


Սովորաբար վվացարանները տեղադրվում են տարբեր բարձրությունների վրա՝ հաշվի առնելով օգտագործողների կարիքները, տարիքային և զարգացման առանձնահատկությունները: Ըստ այնմ, հանրակրթական ուսումնական հաստատություններում 1-4-րդ դասարանի սովորողների համար վվացարանները տեղադրվում են այնպես, որ նրանց վերին եզրի բարձրությունը հատակից լինի 60սմ, իսկ 5-12-րդ դասարանի աշակերտների համար՝ 70սմ: Լվացարանների ներքևի հատվածում անհրաժեշտ է ապահովել առնվազն 20սմ բաց տարածք ծնկների համար՝ վվացարանին անվասայլակով անխոչընդոտ մոտենալու համար: Լվացարանների և դրանց դիմացի պատի միջև անցումը պետք է լինի ոչ պակաս քան 110սմ, իսկ վվացարանների երկու շարքերի միջև՝ 160սմ, ինչը հնարավորություն է տալիս ազատ տեղաշարժվել նաև օժանդակ սարքերի օգնությամբ (ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրաման):

Ծորակներ

Առանձին վվացարանների ծորակների հեռավորությունը միմյանցից պետք է լինի ոչ պակաս, քան 80սմ: Հարմարեցված ծորակները պետք է հնարավորություն տան բացել ջուրը՝ օգտագործելով և՛ ոտքը, և՛ ձեռքը առանց մեծ ջանքեր կամ ուժ գործադրելու: Այն դեպքերում, երբ տեղադրված ծորակները մատչելի չեն, ապա անհրաժեշտ է օգտագործել լրացուցիչ խողովակներ՝ ապահովելով հոսող ջրի հասանելիությունը նաև շարժողական խանգարումներ ունեցող երեխաների համար:

Այլ պարագաներ

Օճառների համար նախատեսված տարաներին, թղթե սրբիչներին կամ ձեռքերի չորացման համակարգերին անխոչընդոտ հասնելու և հեշտությամբ օգտվելու համար դրանք պետք է տեղադրվեն 80-110սմ բարձրության վրա (նկար 27): Այս պարագաները պետք է հնարավոր լինի օգտագործել մեկ ձեռքով, որպեսզի սովորողից չպահանջվեն լրացուցիչ ջանքեր՝ դաստակն ամուր բռնել, սեղմել, ոլորել կամ ուժ գործադրել: Չուգարանի թղթի կախիչները և մաքրող ջրի սեղմակը պետք է հասանելի լինեն: Դրանք կարող են տեղակայվել բռնածողերի ներքևի կամ վերևի հատվածում (բայց ոչ ետևում)՝ հատակի մակարդակից նվազագույնը 30սմ, առավելագույնը՝ 110սմ բարձրության վրա: Անմիջապես լվացարանի ետին պատին տեղադրվող հայելիների ստորին շեմը հատակի մակարդակից պետք է լինի 90սմ, իսկ վերին հատվածը՝ 190սմ բարձրության վրա (World Disability Foundation):




Նկար 27. Հարմարեցված զուգարաններում լվացարանների, ծորակների և հիգիենայի պարագաների տեղադրման չափանիշներ

Խցիկներ և զուգարանակոնքեր

Ուսումնական հաստատություններում մի քանի խցիկ ունեցող զուգարանների առկայության դեպքում լավագույն տարբերակը հարմարեցված խցիկը սովորական խցիկների հետ նույն զուգարանում ունենալն է:


Մի քանի խցիկ ունեցող զուգարանների ընդհանուր տարածքը ևս պետք է համապատասխանի համընդհանուր դիզայնի սկզբունքներին, հատկապես, եթե հարմարեցված զուգարանի խցիկը գտնվում է նույն տեղում (նկար 28): Սովորաբար, խցիկները միմյանցից առանձնացվում են միջնապատերով, որոնք տեղադրվում են հատակից 20սմ բարձրության վրա և շարունակվում մինչև 180սմ բարձրություն: Սովորական խցիկների հատակագծային չափերը պետք է լինեն 80x120սմ: Ընդհանուր սանհանգույցներում անվասայլակով ազատ տեղաշարժ ապահովելու և այլ անձանց կողքով անցնելու հնարավորության համար խցիկների և դիմացի պատի միջև անցումը պետք է լինի 150սմ՝ միզարանների բացակայության դեպքում և 200սմ միզարանների առկայության դեպքում (ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրաման): Հարմարեցված խցիկը պետք է ունենա 150սմx150սմ տարածք և առնվազն 90սմ լայնությամբ դուռը, որը բացվում է դեպի դուրս (World Disability Foundation):



Նկար 28. Բազմախցիկ գուճարանների չափանիշները հարմարեցված խցիկների առկայության դեպքում



ՄԱՍ 1. Հաստատության մուտք և հարակից տարածք



ՄԱՍ 2. Հաստատության տարածք



ՄԱՍ 3. Ցուցանակներ և նշաններ



ՄԱՍ 4. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ



ՄԱՍ 5. Հուզարաններ



ՄԱՍ 6. Ռեսուրս սենյակ



ՄԱՍ 7. Ապաստարան

ՄԱՍ 6.

Ռետուրս-սենյակ

Ցուցիչներ և չափանիշներ

- ◆ Ուսումնական հաստատությունում առկա է ռետուրս-սենյակ, որի մուտքը հասանելի է բոլորին:
- ◆ Ռետուրս-սենյակն ունի առնվազն 25-30քմ տարածք:
- ◆ Ռետուրս-սենյակն ապահովված է բնական և արհեստական լուսավորությամբ:
- ◆ Ռետուրս-սենյակի պատերը ներկված են բաց երանգներով:
- ◆ Ռետուրս-սենյակն ապահովված է ամուր, անվտանգ, հարմարավետ գուլքով, պարագաներով, սարքավորումներով:
- ◆ Ռետուրս-սենյակի կահույքն ընտրված է՝ հաշվի առնելով տարիքային և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները:

Ուսումնական հաստատության ռեսուրս-սենյակը ոչ թե վայր է, որտեղ երեխան որոշակի ժամանակ է անցկացնում, այլ այլընտրանքային միջոց, որով կարելի է խթանել երեխաների արդյունավետ ուսուցումը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ուսումնական հաստատության ռեսուրս-սենյակը պետք է հնարավորություն տա իրականացնել աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

- Մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրում երեխաներին և նրանց ծնողներին:
- Խորհրդատվության և մեթոդական օգնության տրամադրում ուսուցիչներին և դպրոցի վարչական աշխատողներին՝ անհրաժեշտության դեպքում:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ իրականացվող զարգացնող աշխատանքներում նորագույն տեխնոլոգիաների կիրառման մասին տեղեկատվության տրամադրում:

Այս ծառայությունները պատշաճ կերպով տրամադրելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ նախագծված, համապատասխան գույքով կահավորված և նյութատեխնիկական ընդգրկուն բազա ունեցող ռեսուրս-սենյակ:

Ռեսուրս-սենյակում պետք է ապահովված լինի ընկերության և հանդուրժողականության մթնոլորտ, որն անհրաժեշտ նախապայման է բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բնականոն զարգացման համար:

Ռեսուրս-սենյակի կառուցվածքը

Ռեսուրս-սենյակը պետք է ունենա այնքան տարածք, որ այն հնարավոր լինի բաժանել մի քանի գոտիների: Ըստ միջազգային չափանիշների՝ ռեսուրս-սենյակի համար նախատեսվող նվազագույն չափը 25-30քմ է: Ռեսուրս-սենյակի ներքին հարդարման աշխատանքներն իրականացնելիս պետք է ուշադրություն դարձնել գույնային լուծումներին և ձայնամեկուսացմանը՝ ընտրելով համապատասխան նյութեր:

Ռեսուրս սենյակում, ըստ անհրաժեշտության, երեխաներին հնարավորություն է տրվում խաղալ, զարգանալ, սովորել և հանգստանալ նույն վայրում: Ռեսուրս-սենյակը հիմնականում բաժանվում է չորս գոտիների՝ հանգստի, ուսումնական, շարժողական և մասնագետների աշխատանքի, ինչն իրականացվում է համապատասխան կահավորման միջոցով (Kobayashi & Kuboyama, 2002):

Լուսավորումը

Լուսավորության մակարդակը կարող է անմիջականորեն անդրադառնալ աշխատանքների որակի և արդյունավետության վրա: Մութ սենյակը կարող է ճնշել երեխային, իսկ շատ պայծառ լույսից նա կարող է շուտ հոգնել: Այդ իսկ պատճառով ռեսուրս սենյակում լուսավորության մակարդակը հաշվարկելիս պետք է առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N12-Ն հրամանով, ըստ որի՝ լուսավորությունը ուսումնական սենյակում կարող է տատանվել 300-500 լյուքս-ի սահմանում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեսուրս-սենյակը բաժանված է մի քանի գոտիների, լավագույն լուծումը կլինի լուսավորման կարգավորվող համակարգեր ունենալը և լուսավորության մակարդակը փոփոխել ըստ սենյակի տվյալ հատվածի և իրականացվող աշխատանքների նպատակի:

Ինչպես բնական, այնպես էլ արհեստական լուսավորման դեպքում ռեսուրս-սենյակում պետք է լինի համաչափ լուսավորություն: Ռեսուրս-սենյակի կրթական կամ զարգացնող գոտում՝ պարապմունքների կազմակերպման ժամանակ, լուսավորումը սեղանների վրա պետք է լինի ոչ պակաս քան 300 լյուքս, իսկ գրատախտակի առկայության պարագայում անմիջապես գրատախտակի վրա՝ 300-500 լյուքս (ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017թ-ի N 12-Ն հրաման):

Գուևային լուծումները

Ռեսուրս-սենյակի ներքին հարդարման համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի գույներ, որոնք տեսողականորեն ընդլայնում են սենյակը: Պետք է հաշվի առնել, որ մուգ երանգները ճնշելու են երեխային, իսկ չափազանց վառ գույները՝ հոգնեցնելու: Կարևոր է, որպեսզի սենյակի պատերի գույները համապատասխանեն ընդունված նորմերին: Ուսումնական հատվածում դրանք պետք է լինեն բաց երանգներով՝ ուշադրություն չգրավող, իսկ խաղային տարածքում կարելի է ունենալ ավելի վառ երանգներ: Ռեսուրս սենյակի համար կահույք և սարքավորումներ ընտրելիս ևս պետք է ուշադրություն դարձնել դրանց գույներին՝ նախընտրելով այնպիսի գույներ, որոնք ներդաշնակորեն միաձուլվում են տարածքի առանձնահատկությունների հետ (Pardee, 2015):

Կահավորումը

Ջարմարավետության և գործառնականության մասին հարկավոր է մտածել ոչ միայն ռեսուրս-սենյակի տարածքը որպես աշխատանքային միջավայր պլանավորելիս, այլև կահավորելիս, քանի որ սարքավորումների ընտրությունը և կահույքը ռեսուրս սենյակի կարևոր բաղադրիչներն են:

Ռեսուրս սենյակը կահավորելիս պետք է հաշվի առնել երեխաների տարիքային և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները կամ տալ էրգոնոմիկական լուծումներ (Pardee, 2015): Իհարկե, կահույքն ընտրելիս պետք է առաջնորդվել նրանով, թե ինչ նպատակով է այն օգտագործվելու ռեսուրս-սենյակի համապատասխան գոտում: Ըստ այդմ հանգստի գոտում ցանկալի է ունենալ ռետինե գորգ, փափուկ պարկ-աթոռներ, ռետինե մեծ գնդակներ, կախովի ճոճաթոռ և այլն:




Անհատական և խմբային պարապմունքների իրականացման գոտում պետք է ունենալ գրասեղաններ, փոքր և մեծ աշխատանքային սեղաններ՝ համապատասխան աթոռներով (սովորողների համար նախատեսված նստարանների չափանիշների մասին ավելի մանրամասն տե՛ս սույն ձեռնարկի 4-րդ մասում), խաղերի և գրենական պիտույքների համար նախատեսված ցածր պահարաններ, պատի մարկերային գրատախտակ: Անհրաժեշտ է ունենալ նաև ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, տրամաբանությունը, երևակայությունը, խոսքը, ինչպես նաև շարժունակությունը զարգացնող խաղեր (քարտային լոտոներ, դոմինոներ, փազլներ, կառուցողական խաղեր, գրենական պիտույքներ և այլն):

Մասնագետների թիմային աշխատանքների և քննարկումների կազմակերպման գոտին ևս պետք է ունենա իր գործառույթներին համապատասխան կահույք՝ գրասեղան, քննարկումների սեղան՝ իրենց համապատասխան աթոռներով, պահարաններ՝ նախատեսված փաստաթղթերի համար, համակարգիչ, մեթոդական գրականություն, ուղեցույցներ և այլն:







Շարժողական ակտիվության և կենցաղային հմտությունների իրականացման գոտին պետք է նկատի ունենալ մարմնամարզական գորգեր, վեստիբուլյար վարժությունների խողովակ, շվեդական պատ, հավասարակշռության վահանակ և այլն:




Ռեսուրս-սենյակը կահավորելիս կարելի է օգտվել աղյուսակ 2-ում տրված գույքացանկից:

Աղյուսակ 2.
Ռեսուրս-սենյակների գույքացանկ

ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ	ՆԿԱՐ	ՆՅՈՒԹ	ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ	ՉԱՓ
Սեղան	1 հատ		Լամինացված ԴՄՊ՝ առնվազն 18մմ հաստությամբ, 3մմ PVC եզրային ժապավենով: Սեղանի ոտքերը՝ մետաղական:	Նախատեսված է առավելագույնը 6 հոգու համար: Սեղանն ունի կլոր անկյուններ՝ R=16սմ շառավղով, բարձրությունը կարգավորող ոտքեր: Կարգավորվում է 3 մակարդակով՝ 55սմ, 65սմ, 75սմ: Գույնը՝ նարնջագույն կամ բաց կանաչ:	130սմx130սմx75սմ Սեղանի առավելագույն բարձրություն՝ 75սմ Սեղանի նվազագույն բարձրություն՝ 55սմ Ոտքի տրամագիծը՝ 6սմ
Պահարան խաղերի և գրականության համար	1 հատ	 	Պահարան՝ ԴՄՊ 18մմ, եզրաշերտ PVC 0,5մմ Բռնակ՝ մետաղական	<ul style="list-style-type: none"> • Դռներով փակվող դարակ՝ 12 հատ, • բաց նեղ դարակ՝ 12 հատ • բոլոր դռներն ունենան արձաթագույն բռնակներ, • պահարանի ընդհանուր գույնը՝ սպիտակ, 1-ին և 4-րդ շարքի դռների գույնը՝ սպիտակ, 2-րդ և 3-րդ շարքի դռների գույնը՝ բաց կանաչ: 	Պահարան՝ Լայնություն՝ 120սմ Խորություն՝ 47սմ Բարձրություն՝ 205սմ Բռնակ՝ Անցքերի հեռավորությունը առնվազն 160մմ, Բռնակի երկարությունը առնվազն 167մմ, Պահարանից բռնակի միջև եղած հեռավորությունը (խորությունը) առնվազն 3սմ

Պահարաններ ցածր՝ գրենական պիտույքների	2 հատ		Պահարանը լամինատ, գամբյուղները՝ պլաստիկ:	Նախատեսված աշխատանքային նյութերի համար, գամբյուղների գույնը՝ կանաչ և նարնջագույն:	Պահարանի ընդհանուր չափ՝ 81սմx32սմx103սմ Չամբյուղի բարձրությունը 15սմ
Աթոռ	6 հատ		Նստարանն ու հենակը պատրաստված են 3մմ հաստությամբ պլաստիկից, ընդհանուր կարկասը՝ մետաղից: Մետաղական բոլոր կտրվածքները փակված են ռետինե փակ գլանակներով:	Կարգավորվում է 3 մակարդակով՝ 35սմ, 38սմ, 43սմ բարձրությունների վրա: Նստատեղի և հենակի գույնը՝ նարնջագույն կամ բաց կանաչ:	Նստատեղի խորությունը՝ 36սմ Նստատեղի լայնությունը՝ 36սմ Թիկնակի բարձրությունը նստատեղից՝ 46սմ Աթոռի ոտքի երկարությունը (ամենաբարձր դիրքում)՝ 43սմ
Մասնագետի համակարգչային գրասեղան	1 հատ		Լամինատ	Գույնը՝ բաց մոխրագույն:	130սմx68սմ x75սմ
Աթոռ մասնագետի համար	1 հատ		Ոտքերը՝ մետաղական կամ փայտ, նստատեղը՝ փափուկ կաշի, շրջանակը՝ պողպատ:	Գույնը՝ բաց մոխրագույն:	530x540x910մմ, հաստություն՝ 10մմ
Համակարգիչ	1 հատ		Պլաստիկ	Գույնը՝ սև	Լայնություն՝ 489մմ, բարձրություն՝ 367մմ, հաստություն՝ 209մմ

Բազմաֆունկցիոնալ պահարան խաղերի համար	1 x 3 հատ		Պահարանը՝ լամինատ, ոտքերը՝ մետաղական	Տարբեր չափերի՝ իրար մեջ մտնող շարժական 3 մաս, անիվները հատուկ արգելակներով: Ամենափոքր շարժական մասն ունի 4 զամբյուղ: Գույնը՝ բաց կանաչ և դեղին:	Մեծ հատված՝ 115սմx56սմx64սմ, միջին հատված՝ 110սմx50սմx58սմ, փոքր հատված՝ 93սմx50սմx52սմ
Փափուկ պարկ-աթոռ	2 հատ		Կտորը՝ բարձրորակ արհեստական կաշի: Հումքը՝ բարձր խտությամբ փրփրապլաստե գնդիկներ:	Գույնը՝ կանաչ, դեղին:	120սմx100սմ, քաշը՝ 4-5կգ
Լուսային սեղան	1 հատ		Լամինատ	Գույնը՝ երանգավորված փայտ:	50սմx70սմ
Ձևափոխվող գորգը-բազմոց՝ կաշու ամրակներով	1 հատ		Բարձր խտությամբ փրփրապլաստե հումք և վինիլային կաշի:	Հարմար է տարբեր դիրքերով նստելու, նաև հատակի վրա աշխատելու համար: Գույնը՝ կանաչ, դեղին, կապույտ:	Յուրաքանչյուր կտոր ունի 60սմx 60սմx10սմ
Մարմնամարզական գորգեր	2 հատ		Բարձր խտությամբ փրփրապլաստե հումք և վինիլային կաշի:	Փափուկ, ճկուն:	2մx1մx0,1մ
Վեստիբուլյար վարժությունների խողովակ	1 հատ		Բարձր խտությամբ փրփրապլաստե հումք և վինիլային կաշի:	Փափուկ, ճկուն, նախատեսված խոշոր շարժունակության զարգացման համար:	0,65մx1մx 0,6մ

Հավասարակշռության վահանակ	1 հատ		Պատրաստված է փայտից:	Հավասարակշռության զարգացման համար:	30սմx50սմx10սմ
Շվեդական պատ	1 հատ		Հաճարենու փայտ, մետաղ, ջրային հիմքով ներկեր և լաք:	Շարժունակության զարգացման համար:	210սմx108սմx15սմ
Մարկերային շարժական գրատախտակ	1 հատ		Մակերեսը՝ մազնիսական, ալյումինե պրոֆիլով, ոտքերը՝ երկաթ:	Գրատախտակի մազնիսական մակերեսը հնարավորություն է տալիս վրան փակցնել գունավոր մազնիսներ, գրառումները ջնջում են միայն հատուկ ջնջոցներով և, մաքրող հատուկ հեղուկով:	90սմx150սմ



ՄԱՍ 1. Հաստատության մուտք և հարակից տարածք



ՄԱՍ 2. Հաստատության տարածք



ՄԱՍ 3. Ցուցանակներ և նշաններ



ՄԱՍ 4. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ



ՄԱՍ 5. Ջուգարաններ



ՄԱՍ 6. Ռեսուրս սենյակ



ՄԱՍ 7. Ապաստարան

ՄԱՍ 7.

Ապաստարան

Ցուցիչներ և չափանիշներ

- Ուսումնական հաստատությունն ունի ներքին կամ ինքնուրույն ապաստարան:
- Ապաստարանը նախագծված է՝ հաշվի առնելով դիզայնի չափանիշները, զբաղվածության տևողությունը, օդափոխման պահանջները:
- Դեպի ապաստարան տանող ճանապարհին առկա են հստակ գծանշումներ:
- Ապաստարան տանող ճանապարհը և ապաստարանի մուտքը զերծ են ամեն տեսակ խոչընդոտներից:
- Ապաստարանի տարածքը նախատեսված է դպրոցի ողջ անձնակազմի համար՝ հաշվի են առնված ինչպես տարիքային, այնպես էլ զարգացման առանձնահատկությունները:
- Ապաստարանն ապահովված է վթարային լուսավորությամբ և էլեկտրաէներգիայով:
- Ապաստարանը կահավորված է անհրաժեշտ գույքով, պարագաներով և սարքավորումներով՝ հաշվի են առնված տարիքային առանձնահատկությունները:
- Ապաստարանում առկա է անհրաժեշտ իրերի անվանացանկ:
- Ապաստարանը նախագծված է սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան:


Ապաստարանների հիմնական նպատակն արտակարգ իրավիճակների (բնական աղետներ, պատերազմ) ժամանակ մարդկանց անվտանգությունն ապահովելն ու ժամանակավոր կացարան տրամադրելն է: Քաղաքացիական պաշտպանության հաստատված ծրագրեր ունեցող շատ երկրներում ապաստարանների կառուցման համապարփակ ծրագիրը՝ պարզագույն թաքստոցների և ապաստարանների առկայությունը համարվում է զանգվածային ոչնչացման զենքի խոցման գործոնների ազդեցությունից, ռադիոակտիվ, քիմիական ու կենսաբանական թունավոր նյութերից, հրդեհներից առաջացող բարձր ջերմաստիճանից քաղաքացիներին պաշտպանելու ամենատեսանելի և արդյունավետ միջոցը: Ավելին, պատերազմական իրավիճակներում ռազմաճակատում գտնվողներն իրենց ավելի հանգիստ և ապահով են զգում՝ իմանալով, որ իրենց մտերիմները տանը կամ դպրոցում պաշտպանված են:

Ապաստարանների առկայության պահանջը փոխում է մեր մոտեցումը ուսումնական հաստատությունների դիզայնի վերաբերյալ (USAID, 2005):


Ուսումնական հաստատությունները պետք է ունենան այնպիսի ապաստարաններ, որոնք ոչ միայն անվտանգություն են ապահովում, այլև հարմարավետություն:

Գտնվելու վայրը

Կան ապաստարանների երկու տարբեր տեսակներ՝ առանձին կառուցված և ներկառուցված, որոնք էլ իրենց հերթին կարող են լինել ստորգետնյա կամ վերգետնյա: Ուսումնական հաստատություններում որպես ապաստարան կարող են ծառայել նկուղային (ստորգետնյա) տարածքները, որոնք համարվում են **ներկառուցված ապաստարաններ** և հանդիսանում հիմնական շենքի նախագծի մաս (Նկար 29): Որոշ դեպքերում հաստատությունը կարող է ունենալ որևէ այլ շենքի ներսում կամ կից կառուցված ապաստարան, որը ևս համարվում է նախագծի մի մաս և դասվում **առանձին կառուցված ապաստարանների** շարքին (Նկար 30): Այն դեպքերում, երբ հաստատությունը չունի նման տարածքներ, որպես ապաստարան ծառայում են դասարանները, մարզադահլիճները կամ դրանց մի հատվածը: Հարկ է նշել, որ ապաստարանների տեղակայման ընտրության հարցում չի կարող լինել ստանդարտ մոտեցում, քանի որ դա կախված է շինության ամբողջական նախագծից և տվյալ տարածաշրջանում առկա վտանգներից (բնական աղետներ, պատերազմներ և այլն): Ցանկացած դեպքում ապաստարանը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որը թույլ կտա հաստատության անձնակազմին և երեխաներին արագ կողմնորոշվել և հեշտությամբ հասնել ապաստարան:



Նկար 29. Ներկառուցված ապաստարանի սխեմա



Նկար 30. Առանձին կառուցված ապաստարանի սխեմա

Ճգնաժամային աջակցության համակարգեր

Ճգնաժամային աջակցության համակարգերը սահմանվում են որպես կառույցներ և սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են ապաստարանում գտնվող մարդկանց առողջությունը, անվտանգությունը և բարեկեցությունն ապահովելու համար: Դրանք զուգարաններն են, լվացարանները, կրակմարիչները, առաջին օգնության պարագաները, հանդերձանքները, լուսավորման, օդափոխման համակարգերը և այլն: Առաջնորդվելով համընդհանուր դիզայնով՝ ապաստարանը պետք է նախագծել և կահավորել՝ հաշվի առնել անձնակազմի և սովորողների տարիքային և զարգացման առանձնահատկությունները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար սահմանված խելամիտ հարմարեցումները: Հարկ է նշել, որ նշված սարքավորումները, պարագաները և համակարգերը պետք է ունենան այնպիսի դիզայն, որը հասանելի կլինի բոլորին (Donalyn, 2017):


Ապաստարանի չափանիշները

Ցանկացած տեսակի սենյակ կարող է օգտագործվել որպես թաքստոց կամ ապաստարան, եթե այն համապատասխանում է սահմանված չափանիշներին:

Մատչելիություն

Ապահով սենյակը պետք է արագ հասանելի լինի բոլորի համար: Այն պետք է տեղակայվի այնպես, որ հնարավոր լինի հասնել այնտեղ նվազագույն ժամանակահատվածում: Անվտանգ սենյակ հասնելու ժամանակի համար հատուկ պահանջներ չկան, այնուամենայնիվ, շենքի ամենահեռավոր կետից անվտանգ սենյակ տեղափոխելը պետք է տևի 2 րոպեից պակաս: Դեպի ապաստարան ուղղորդող ցուցանակները պետք է լինեն մատչելի, փակցված հաստատության յուրաքանչյուր հարկում և դպրոցի անձնակազմին ուղղորդեն շենքի ներսում կամ շենքից դուրս գտնվող ապաստարան: Ապաստարանը պետք է հասանելի լինի շարժողական խնդիրներով, ճանաչողական կամ հաշմանդամություն ունեցող այլ անձանց համար: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին կարող է անհրաժեշտ լինել այլ անձանց օգնությունը ապաստարան հասնելու համար, անվասայլակով տեղաշարժվողներին կարող է անհրաժեշտ լինել որոշակի ուղի, որտեղ տեղավորվում է սայլակը՝ վերելակ, թեքահարթակներ և այլն: Այս գործոնները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ապահովել հնարավորինս կարճ և առավել մատչելի ճանապարհ դեպի ապաստարան: Ապաստարան տանող երթուղիները պետք է լինեն հասանելի, հստակ գծանշված և զերծ խոչընդոտներից, քանի որ դրանք կարող են ստեղծել ավելորդ լարվածություն, քաոս և խուճապ (Pardee, 2015):

Ապաստարանի ելքը ևս պետք է նախագծված լինի այնպես, որպեսզի ապահովվի շարունակական, անխոչընդոտ ճանապարհ դեպի արտաքին կամ անվտանգ համարվող այլ տարածք: Կարևոր է, որ ապաստարանի տարածքներ մուտք ապահովող դռները նույնականացվեն համապատասխան նշանով, որը ներառում է «ԱՂԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔ» տերմինը և մատչելիության միջազգային խորհրդանիշը:



Նկար 31. Դեպի ապաստարան ուղղորդող նշանների օրինակներ

Տարածքի չափեր

Ըստ միջազգային չափանիշների և Ամերիկյան Կարմիր Խաչի 4496 հրատարակության՝ ապաստարանը պետք է ապահովի 5-40 քառակուսի ոտնաչափ յուրաքանչյուր անձի համար՝ կախված ապաստարանում գտնվելու օրերից, ժամերից, անձի տարիքից և առանձնահատկություններից (աղյուսակ 3):

Աղյուսակ 3.
Ապաստարանի չափեր

Տևողություն	Տարիքային խումբ, առանձնահատկություններ	Չափ (մեկ անձի համար)
մինչև 2 ժամ զբաղվածություն	մեծահասակներ կանգնած վիճակում	152 քառ. սմ
	մեծահասակներ նստած վիճակում	182 քառ. սմ
	երեխաներ (մինչև 10 տարեկան)	152 քառ. սմ
	անվասայլակով տեղաշարժվող	305 քառ. սմ
մի քանի օրից մեկ շաբաթ (կարճաժամկետ կացություն)	բոլոր վերը նշվածներ	610 քառ. սմ
մի քանի շաբաթ և ավել (երկարաժամկետ կացություն)		1220 քառ. սմ

Լուսավորում

Բազմաֆունկցիոնալ ապաստարանները պետք է ունենան վթարային լուսավորություն և էլեկտրաէներգիա, ինչպես նաև պահեստային էներգիայի աղբյուր: Աղետի ժամանակ լուսավորություն ապահովելու համար պահեստային էներգիայի աղբյուրը կարևոր է, քանի որ հիմնական էներգիայի աղբյուրը հաճախ խափանվում է: Որպես պահեստային աղբյուր՝ առաջարկվում է մարտկոցով աշխատող համակարգը, քանի որ այն կարող է տեղակայվել և լիովին պաշտպանված լինել ապաստարանում: Լապտերները, որոնք առկա են ապաստարանի պահարաններում, կարևոր են, սակայն համարվում են լուսավորության երկրորդային աղբյուր և չեն կարող օգտագործվել որպես հիմնական լուսավորության համակարգ: Աղետի ժամանակ հուսալի լուսավորության համակարգը ապահովության զգացողություն կստեղծի ապաստարանում գտնվողների մոտ, իսկ հակառակ դեպքում կարող է հուզմունքի ու սթրեսի պատճառ դառնալ (FEMA 453, 2006):

Օդափոխություն

Ըստ օդափոխության համակարգի ապաստանները բաժանվում են երկու խմբի՝ օդափոխվող և չօդափոխվող: Չօդափոխվող ապաստարաններում փակվելուց հետո նվազագույնի է հասցվում արտաքին օդի հոսքը դեպի ապաստարան: Այս տարբերակն առավել արդյունավետ է այն դեպքերում, երբ դրսում օդն ախտոտված է: Չարկ է նշել, որ նմանատիպ ապաստարաններում կարելի է մնալ մի քանի ժամից մինչև մի քանի օր՝ կախված ապաստարանի չափից: Օդափոխվող ապաստարաններն ունենում են օդափոխման համակարգ: Նման ապաստարաններում կարելի է ավելի երկար ժամանակ պատասպարվել: Պետք է նշել, որ ոչ բոլոր դեպքերում են օդափոխվող ապաստարաններն արդյունավետ, քանի որ դեպի ապաստարան ֆիլտրվող օդի հոսքի հետ կարող են թափանցել վնասակար նյութեր (FEMA 453, 2006; ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 08.04.2022 N 06-Ն հրաման):

Անհրաժեշտ սարքեր և պարագաներ

o **Հաղորդակցության սարքեր**

Կարևոր հանգամանք է ապաստարանում հեռահաղորդակցման սարքեր ունենալը, ինչի միջոցով հնարավոր կլինի կապվել արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությունների հետ և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն կամ ցուցումներ:

o **Գուլք, պարագաներ, սարքավորումներ և անհրաժեշտ այլ իրեր**

Յուրաքանչյուր ապաստարան ունենում է տարաբնույթ սարքավորումներ, գուլք, սննդի և ջրի պաշարաներ, սանիտարահիգիենիկ պարագաներ, կապի սարքավորումներ, զբաղվածություն ապահովելու նպատակով դիդակտիկ նյութեր և առաջին անհրաժեշտության այլ պարագաներ (աղյուսակ 4): Դրանց թիվը կարող է լինել շատ, իսկ արտակարգ և ճգնաժամային իրավիճակների դեպքում արագ արձագանքման համար ժամանակը՝ քիչ: Այդ իսկ պատճառով ապաստարանների գուլքագրումն ու ընթացիկ սպասարկումը պետք է իրականացվի պատշաճ կերպով: Այս ամենը համակարգված իրականացնելու համար անհրաժեշտ է որպեսզի ապաստարաններն ունենան արտակարգ իրավիճակների պարագաների գուլքագրման **ստուգաթերթեր**, ապաստանը կանոնավոր պահպանման և ստուգման **ժամանակացույց**, արտակարգ իրավիճակների դեպքում լուսավորության, էներգիա և օդափոխության համակարգերի գործարկման համար անհրաժեշտ գեներատորների կիրառության վերաբերյալ **տեղեկատվություն**:

Աղյուսակ 4.

Անհրաժեշտ սարքավորումների և պարագաների ցանկ ապաստարանների համար

Տեսակ	Սարքավորումներ/Պաշարներ
Հաղորդակցության սարքեր	<ul style="list-style-type: none"> • Ռադիոներ կամ արտակարգ իրավիճակների ռադիոկայաններ՝ կապված ոստիկանության կամ արտակարգ իրավիճակների համակարգերի հետ • Բջջային հեռախոսներ, անլար և լարով մարտկոցներ • Մարտկոցով աշխատող ռադիոհաղորդիչներ կամ ազդանշան արձակող սարքեր, որոնք կարող են ազդանշան տալ արտաքին իրավիճակների անձնակազմին • Դյուրակիր զեներատորներ՝ անխափան մնուցման և օդափոխման համակարգերով • Դյուրակիր համակարգիչներ՝ մոդեմով և ինտերնետի հնարավորություններով • Հեռուստացույց • Ֆաքս.պատճենահանող սարք, սկաներ, հանրային հասցեների համակարգեր • Ստանդարտ գրասենյակային պարագաներ (թուղթ, նոթատետրեր, կեռիկներ, գրատախտակներ, մարկերներ և այլն)
Առաջին օգնության պարագաներ	<ul style="list-style-type: none"> • Զայլակ, սայլակ • Առանց դեղատոմսի դեղեր (օրինակ՝ ասպիրին և այլ ցավազրկողներ) • Կպչուն ժապավեն և վիրակապ տարբեր չափերի, մկրատ և պինցետ, մանրէազերծող լուծույթներ, հակաբիոտիկ քսուլներ, հոտավետ աղեր, ջերմաչափեր • Խոնավ անձեռոցիկներ • Առաջին օգնության ձեռնարկներ
Արտակարգ իրավիճակի պարագաներ, սարքավորումներ	<ul style="list-style-type: none"> • Ապաստանի շահագործման պլանի ամնվազն երկու օրինակ • Լապտերներ և մարտկոցներ, փայլուն ձողիկներ • Կրակմարիչներ • Ավտոմատացված ջրցան համակարգեր • Վերմակներ • Երկաթյա ձողեր (դռները բացելու համար, որոնք կարող են վնասվել կամ արգելափակվել բեկորներով) • Պատզարակներ և/կամ ետնատախտակներ • Աղբի տարաներ • Ավտոմատացված արտաքին դեֆիբրիլյատոր • Դիմակներ, փախուստի գլխարկներ • Ջեռուցիչներ • Առաջին շտապ օգնության պայուսակ
Գույք	<ul style="list-style-type: none"> • Գրասեղան • Կարգավորվող աթոռներ • Պահարան • Փափուկ գորգ՝ վիճակային կաշվե մակերեսով

	<ul style="list-style-type: none"> • Բարձեր՝ կաշվե մակերեսով, հումքը՝ սպունգով, որոնք կարող են ծառայել նաև որպես նստատեղի փափուկ հարմարանք • Մահճակալներ
Չբաղվածություն ապահովող պարագաներ	<ul style="list-style-type: none"> • Գրքեր, դիդաոտիկ նյութեր, խաղեր՝ նախատեսված տարբեր տարիքային խմբերի համար • Գաջեթներ
Սանիտարական պարագաներ	<ul style="list-style-type: none"> • Չուգարանի թուղթ, կտորե և թղթե սրբիչներ • Անձնական հիգիենայի պարագաներ • Ախտահանիչներ • Պլաստիկ տոպրակներ • Դյուրակիր քիմիական զուգարան(ներ), երբ ապաստարանում սովորական զուգարաններ չկան (FEMA P-361, 2021; FEMA 453, 2006):

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ
Ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի
մատչելիության գնահատման

ՀՀ	Դիտարկվող միջավայր	Առկա է	Առկա է մասամբ	Առկա չէ	Նշումներ
Ա. Հաստատության մուտք և հարակից տարածք					
1.	Հաստատության տարածք մուտք գործելու հիմնական դարպասի շրջակայքը հարթ է, գերծ աճելորդ ակոսներից և խոչընդոտներից:				
2.	Դեպի դարպաս տանող ճանապարհը քավականաչափ լայն է անվասայլակ, քայլակ կամ օժանդակ այլ սարքավորումներ օգտագործող երեխաների համար:				
3.	Դեպի շենք տանող մայթերին առկա են բարձր եզրաքարեր՝ անվասայլակ, քայլակ կամ օժանդակ այլ սարքավորումներ օգտագործելիս մայթի սահմաններից շեղվելուց խուսափելու համար:				
4.	Հիմնական մուտքը գերծ է աստիճաններից և հասանելի բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողների համար:				
5.	Այլընտրանքային մուտքերը գերծ են աստիճաններից և հասանելի է բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողների համար:				
6.	Հաստատության մուտքի մոտ և հարակից տարածքում, ինչպես նաև առկա անցուղիների հատակի մակերեսն ամուր է, հարթ, գերծ քարերից, ավազից կամ ցեխից:				
7.	Բակում առկա անցուղիներն ունեն առնվազն 92 սմ լայնություն:				
8.	Անցուղիների հատվածում գլխավերևում գտնվող հնարավոր վտանգները, ինչպես օրինակ՝ լուսավորությունը, ցուցանակները, ծառերի ճյուղերն ու սաղարթները և այլն, գտնվում են 203սմ բարձրության վրա:				

9.	Առկա են թեքահարթակներ բոլոր այն դեպքերում, երբ փոխվում է հատակի բարձրությունը:				
10.	Թեքահարթակների մուտքի հատվածները գերծ են անհարկի պատնեշներից և խոչընդոտներից (ճաղաշարեր, կայանված մեքենաներ, ծաղկամաններ և այլն):				
11.	Թեքահարթակների թեքությունը բավարար է, որպեսզի անվասայլակ, քայլակ կամ օժանդակ այլ սարքավորումներ օգտագործող սովորողները կարողանան ինքնուրույն օգտվել դրանից:				
12.	Թեքահարթակների մակերեսն ամուր է, հարթ և լավ պահպանված:				
13.	Թեքահարթակներն ունեն անհրաժեշտ ճաղաշար կամ արգելապատ համապատասխան բազրիքներ և/կամ բռնածողեր:				
Բ. Հաստատության տարածք					
14.	Հաստատության ներսում հատակի մակերեսն ամուր է, հարթ և լավ պահպանված:				
15.	Առկա են թեքահարթակներ բոլոր այն դեպքերում, երբ փոխվում է հատակի բարձրությունը:				
16.	Շեմերը չեն գերազանցում 10մմ-ը, իսկ 5մմ-ը գերազանցող ցանկացած ելուստ թեք է կամ կլորացված:				
17.	Միջանցքներն ու անցումներն ունեն 150-180սմ լայնություն:				
18.	Աստիճաններն ունեն ճաղաշար և բազրիքներ:				
19.	Բազրիքներն ունեն բարձր գունային հակադրություն:				
20.	Սանդուղքի յուրաքանչյուր աստիճանի առջևի եզրը ներկված է (պահպանված է գունային հակադրությունը):				
21.	Միջանցքները, անցումները և աստիճանները լավ լուսավորված են:				
22.	Հարկից հարկ տեղափոխվելու համար առկա է վերելակ և/կամ հասանելիություն ապահովող այլ սարքավորումներ և հարմարանքներ:				

23.	Հաստատության ներսում առկա բոլոր դռներն ունեն առնվազն 90սմ լայնություն:				
24.	Դռների բռնակները տեղադրված են հատակից 90-110սմ բարձրության վրա:				
Գ. Ցուցանակներ և նշաններ					
25.	Դպրոցի ներսում առկա բոլոր դասարանների, լաբորատորիաների, սանհանգույցների, ճաշարանի, գրադարանի և այլ տարածքների նույնականացման համար կան ցուցանակներ և նշաններ:				
26.	Առկա են ինչպես գրավոր, այնպես էլ պատկերային ցուցանակներ և նշաններ:				
27.	Ցուցանակները և նշանները պարունակում են բրայլյան գիր, ուռուցիկ տառատեսակով տպագիր և ուռուցիկ պատկերագիր, որոնք հաղորդում են նույն տեղեկատվությունը:				
28.	Նշանները հստակ են և միանշանակ:				
29.	Ցուցանակների տեքստը կարճ է, պարզ և հասկանալի:				
30.	Ցուցանակների տեքստի տառերի մեծությունը, տառատեսակը և դասավորությունը հստակ են և ընթեռնելի:				
31.	Տառերի նվազագույն չափը 1,5սմ է, և կախված կարդալու նախատեսված հեռավորությունից՝ յուրաքանչյուր 1 մետրի համար ավելանում է 2-3սմ-ով:				
32.	Ցուցանակները տեղադրված են դռների սողնակային կողմում՝ փեղկից 5-10սմ հեռավորության վրա:				
33.	Պատերին փակցված բոլոր տեսակի ցուցանակները և նշանները տեղադրված են հատակից 120-160սմ բարձրության վրա (տարրական և միջին դպրոցներում՝ 100-140սմ):				
34.	Միջանցքներում առաստաղից կախված ցուցանակները հատակից բարձր են առնվազն 220սմ:				

35.	Ֆուցանակները և նշաններն ունեն չանդրադարձնող մակերես:				
36.	Տեքստի կամ պատկերագրերի և դրանց միջավայրի միջև առկա է գունային բարձր հակադրություն:				
37.	Լուսավորվող նշանների առկայության դեպքում կարմիր տեքստը բաց ֆոնի վրա է:				
38.	Տարհանման պլանն առկա է հաստատության յուրաքանչյուր հարկում և համապատասխանում է վերը նշված չափանիշներին:				
Դ. Դասասենյակներ և այլ աշխատանքային տարածքներ					
39.	Աշակերտական սեղանների շարքերի, առկա պահարանների և մնացած գույքի միջև հեռավորությունը առնվազն 90սմ է:				
40.	Դասասենյակի բոլոր այն հատվածներում, որտեղ կա շրջադարձ կատարելու անհրաժեշտություն, առկա է 150սմ տարածություն:				
41.	Դասասենյակները կահավորված են տարիքային չափանիշներին համապատասխան աշակերտական սեղաններով և աթոռներով:				
42.	Դասասենյակի սեղաններն ու աթոռները հնարավոր է տեղաշարժել ըստ անհրաժեշտության:				
43.	Կան աշակերտական սեղաններ, որոնք հարմարեցված են անվասայլակ օգտագործող սովորողների համար:				
44.	Պատուհանները սկսվում են 60սմ բարձրությունից:				
45.	Գրատախտակը տեղադրված է հատակից 50սմ բարձրության վրա:				
46.	Գրատախտակների մակերեսը փայլատ է, մուգ կանաչ կամ մուգ դարչնագույն գունավորմամբ:				
47.	Դասասենյակներում առկա պահարանների դարակները գտնվում են հատակից 38-120սմ բարձրության վրա:				
48.	Դասասենյակներն ունեն բավարար բնական և արհեստական լուսավորություն:				

49.	Դասասենյակներում առկա են բավարար քանակությամբ վարդակներ (տարրական դասարաններում՝ պաշտպանիչ ծածկոցներով):				
50.	Սենյակների ցուցանակներն առանձնանում են գուևային բարձր հակադրությամբ և մեծ տառաչափով:				
51.	Սենյակների նույնականացման նշանները ներառում են սենյակի անվանումը և համարը ինչպես բրայլյան գրով, այնպես էլ շոշափելի տառերով:				
52.	Սենյակների հատակի մակերեսը միագույն է, ամուր, դիմացկուն, հարթ և լավ պահպանված ծածկույթով:				
53.	Գործնական աշխատանքների սենյակները, լաբորատորիաները, ընթերցասրահները և դասասենյակները լավ լուսավորված են՝ համապատասխան գործողությունների իրականացումը հեշտացնելու համար:				
54.	Դասարաններում կան վարագույներ կամ շերտավարագույրներ գրատախտակների փայլը վերահսկելու համար:				
Ե. Չուզարաններ					
55.	Սանհանգույցի տարածքն այնքան մեծ է, որ թույլ է տալիս անվասայլակ օգտագործող սովորողին անցնել այլ անձանց կողքով:				
56.	Չուզարանների խցիկներն ունեն կողավող դռներ անվտանգության և գաղտնիության պահպանման համար:				
57.	Չարմարեցված զուզարանների խցիկներն ունեն առնվազն 90սմ լայնությամբ դուռ:				
58.	Չարմարեցված զուզարանները և/կամ առանձին հարմարեցված խցիկն այնքան մեծ է, որ հնարավորություն է տալիս անվասայլակ օգտագործող սովորողին մտնել և անհրաժեշտության դեպքում պտտվել ներսում:				
59.	Սանհանգույցները լավ լուսավորված				

	են:				
60.	Սանհանգույցներում առկա է մաքուր, հոսող ջուր:				
61.	Խմելու ջրի և լվացարանների ծորակները հնարավոր է միացնել ձեռքով կամ ոտքով:				
62.	Լվացարանները տեղադրված են տարբեր բարձրությունների վրա:				
63.	Լվացարանները գտնվում են զուգարանների մոտ:				
64.	Լվացարանների ներքևի հատվածում ապահովված է առնվազն 20սմ բաց տարածք՝ լվացարանին անվասայլակով անխոչընդոտ մոտենալու համար:				
65.	Հարմարեցված զուգարանների կողքի պատերին տեղադրված են բռնածողեր:				
66.	Առկա են բռնակներ կամ բռնածողեր, անվասայլակներից մինչև զուգարանակոնք ինքնուրույն հասնելու համար:				

2. Ռեսուրս-սենյակ

67.	Ուսումնական հաստատությունում առկա է ռեսուրս-սենյակ, որի մուտքը հասանելի է բոլորին:				
68.	Ռեսուրս-սենյակն ունի առնվազն 25-30քմ տարածք:				
69.	Ռեսուրս-սենյակն ապահովված է բնական և արհեստական լուսավորությամբ:				
70.	Ռեսուրս-սենյակի պատերը ներկված են բաց երանգներով:				
71.	Ռեսուրս-սենյակն ապահովված է ամուր, անվտանգ, հարմարավետ գույքով, պարագաներով, սարքավորումներով:				
72.	Ռեսուրս-սենյակի կահույքն ընտրված է՝ հաշվի առնելով տարիքային և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները:				

Է. Ապաստարան

73.	Ուսումնական հաստատությունն ունի ներքին կամ ինքնուրույն ապաստարան:				
-----	---	--	--	--	--

74.	Ապաստարանը նախագծված է՝ հաշվի առնելով դիզայնի չափանիշները, զբաղվածության տևողությունը, օդափոխման պահանջները:				
75.	Դեպի ապաստարան տանող ճանապարհին առկա են հստակ գծանշումներ:				
76.	Ապաստարան տանող ճանապարհը և ապաստարանի մուտքը զերծ են ամեն տեսակ խոչընդոտներից:				
77.	Ապաստարանի տարածքը նախատեսված է դպրոցի ողջ անձնակազմի համար՝ հաշվի են առնված ինչպես տարիքային, այնպես էլ զարգացման առանձնահատկությունները:				
78.	Ապաստարանն ապահովված է վթարային լուսավորությամբ և էլեկտրաէներգիայով:				
79.	Ապաստարանը կահավորված է անհրաժեշտ գույքով, պարագաներով և սարքավորումներով՝ հաշվի են առնված տարիքային առանձնահատկությունները:				
80.	Ապաստարանում առկա է անհրաժեշտ իրերի անվանացանկ:				
81.	Ապաստարանը նախագծված է սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան:				
82.	Առկա են ինչպես տեսողական, այնպես էլ լսողական ահազանգեր:				

Գրականության ցանկ

1. «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ»-ի մասին ՀՀ առողջապահության նախարարի՝ 28.03.2017թ-ի N 12-Ն հրաման:
2. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրամանը «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին
3. ՀՀ քաղաքաշինության նախարարի N 263-Ն հրամանը «ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելում մասին»
4. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 08.04.2022 N 06-Ն հրամանը «ՀՀՇՆ 31-03.02-2022 «ՀՀ քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերը հաստատելու մասին»
5. ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02.05-2003) Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար
6. Ahrentzen, S. & Steele, K., 2009, Advancing Full Spectrum Housing: Design for Adults with Autism Spectrum Disorders, ASU Stardust Center for Affordable Homes and the Family and ASU Herberger Institute School of Architecture and Landscape Architecture
7. Apelt, R. and Crawford, J. and Hogan, David J. (2007) Wayfinding Design Guidelines. CRC for Construction Innovation, Brisbane
8. Donalyn A. Dela Cruz: The role of schools and their capabilities to ensure safe sheltering during a storm, march 2017
9. Kobayashi, M. & Kuboyama, S., The Role of Resource Rooms in Educational Counseling of Children with Special Needs, 2002
10. Manley, S., 2016. Inclusive Design in the Built Environment. Training Handbook
11. McKevitt, P. 2012, Improving the Accessibility of School Buildings
12. Pardee, M., 2005, Rhode Island Child Care & Early Learning Facilities Fund, Resource Guide. Child Care Center Equipment & Furnishings. Updated by staff of the Rhode Island Child Care & Early Learning Facilities Fund, May 2015
13. Risk Management Series Safe Rooms and Shelters Protecting People Against Terrorist Attacks FEMA 453 / May 2006
14. Royal New Zealand foundation of the blind, Accessible-Signage-Guidelines, 2013, ISBN: 978-0-473-26054-5
15. Safe Rooms for Tornadoes and Hurricanes Guidance for Community and Residential Safe Rooms FEMA P-361, April 2021 Fourth Edition
16. United Nations Children's Fund (UNICEF) 2014 Access to School and the Learning Environment I- Physical, Information and Communication
17. United Nations children's Fund (UNICEF), 2016, Making Schools Accessible to Children with Disabilities
18. USAID, gov. Shelters and Shelter Management, Reference Guide, Oct 2005
19. World Disability Foundation, Universal Standards Guide for Persons with Disabilities, 192pp

Սվաջյան Ա.Յ., Ադամյան Յ.Ա., Մարգարյան Լ.Յ., Գարեգինյան Ա.Ա., Հակոբյան Լ.Գ.,
Մուրադյան Ռ.Մ., Գրիգորյան Լ.Կ.

ՄԱՏՉԵԼԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

1

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԵՐ

Մեթոդական ուղեցույց